ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի ապրիլի 22-ի
թիվ 140 Ն որոշման

# «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/03-Ը

## ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի (այսուհետ՝ ներդրումային ընկերություն) կողմից, ինչպես նաև բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային գործունեության մասով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգն ու ժամկետները:

### ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը.

1) **«Ամսաթիվ»**՝ ամսաթիվը, ամիսն ու տարեթիվը (մասնավորապես՝ 01/01/2008թ.):

2) **«Հաշվետու տարի»**՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Ներդրումային ընկերության համար առաջին հաշվետու տարի է համարվում ներդրումային ծառայության մատուցման լիցենզիան ստանալու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

3) **«Հաշվետու եռամսյակ»**՝ օրացուցային տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Ներդրումային ընկերության համար առաջին հաշվետու եռամսյակ է համարվում ներդրումային ծառայության մատուցման լիցենզիան ստանալու օրվանից մինչև տվյալ եռամսյակի վերջն ընկած ժամանակաշրջանը: Ներդրումային ծառայություններ մատուցող բանկի համար՝ առաջին հաշվետու եռամսյակ է համարվում ներդրումային ծառայությունների մատուցման վերաբերյալ

Կենտրոնական բանկին տեղեկացմանը հաջորդող 15-րդ օրվանից մինչև տվյալ եռամսյակի վերջն ընկած ժամանակաշրջանը:

4) **«Հաշվետու ամիս»**՝ օրացուցային տարվա սկզբից մեկ ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Ներդրումային ընկերության համար (տվյալ լիցենզիայի մասով) առաջին հաշվետու ամիս է համարվում տվյալ ներդրումային ծառայության մատուցման լիցենզիան ստանալու օրվանից մինչև տվյալ ամսվա վերջն ընկած ժամանակաշրջանը: Ներդրումային ծառայություններ մատուցող անձ համարվող բանկի համար՝ առաջին հաշվետու ամիս է համարվում ներդրումային ծառայությունների մատուցման վերաբերյալ Կենտրոնական բանկին տեղեկացմանը հաջորդող 15-րդ օրվանից մինչև տվյալ ամսվա վերջն ընկած ժամանակաշրջանը:

5) «**Հաշվետու շաբաթ**»՝ երկուշաբթի օրվանից մինչև կիրակի օրն (ներառյալ) ընկած ժամանակաշրջան: Ներդրումային ընկերության համար (տվյալ լիցենզիայի մասով) առաջին հաշվետու շաբաթ է համարվում տվյալ ներդրումային ծառայության մատուցման լիցենզիան ստանալու օրվանից մինչև տվյալ շաբաթվա կիրակի օրը (ներառյալ) ընկած ժամանակաշրջանը: Ներդրումային ծառայություններ մատուցող անձ համարվող բանկի համար առաջին հաշվետու շաբաթ է համարվում ներդրումային ծառայությունների մատուցման վերաբերյալ Կենտրոնական բանկին տեղեկացմանը հաջորդող 15-րդ օրվանից մինչև տվյալ շաբաթվա կիրակի օրը (ներառյալ) ընկած ժամանակաշրջանը:

6) **«Հաշվետու օր»**՝ յուրաքանչյուր օր, որի ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձն իրականացրել է գործունեություն:

7) **«Հաշվետու ժամանակաշրջան»**՝ հաշվետու օր, հաշվետու շաբաթ, հաշվետու ամիս, հաշվետու եռամսյակ կամ հաշվետու տարի:

8) **«Ռեզիդենտ»/«ոչ ռեզիդենտ»**՝ ըստ Կենտրոնական բանկի նախագահի 2007 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկը հաստատելու մասին» թիվ 1/12Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկով» սահմանված նշանակության:

9) «**Ֆորվարդ գործարք կամ ֆորվարդ**»՝ կարգավորվող շուկայից դուրս կնքվող համաձայնություն ակտիվի (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ՝ նախապես սահմանված գնով և չստանդարտացված պայմաններով, որի դեպքում կողմերը ստանձնում են գործարքի վերջնահաշվարկի իրականացման պարտավորություն: Կախված ֆորվարդի (ֆորվարդ գործարքի) հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ ֆորվարդը (ֆորվարդ գործարքը) համարվում է արժութային ֆորվարդ, արժեթղթերով ֆորվարդ կամ այլ ակտիվներով ֆորվարդ:

10) **«Ֆյուչերս գործարք կամ ֆյուչերս**»՝ կարգավորվող շուկայում կնքվող համաձայնություն ակտիվի (արժույթ, արժեթուղթ

կամ այլ ակտիվ) ապագա գնման կամ վաճառքի վերաբերյալ՝ նախապես սահմանված գնով և այլ ստանդարտացված պայմաններով, որի դեպքում կողմերը ստանձնում են գործարքի վերջնահաշվարկի իրականացման պարտավորություն: Կախված ֆյուչերսի (ֆյուչերս գործարքի) հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ ֆյուչերսը (ֆյուչերս գործարքը) համարվում է արժութային ֆյուչերս, արժեթղթերով ֆյուչերս կամ այլ ակտիվներով ֆյուչերս:

11) **«Օպցիոն գործարք կամ օպցիոն»**՝ համաձայնություն, որով մի կողմը (օպցիոնի գնորդը) իրավունք է ձեռք բերում վաճառել (գնել) որոշակի բազիսային ակտիվ (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ) պայմանագրում նշված ժամկետում և գնով, իսկ մյուս կողմը (օպցիոնի վաճառող) պարտավորություն է ստանձնում գնել (վաճառել) այդ ակտիվը (արժույթ, արժեթուղթ կամ այլ ակտիվ): Կախված օպցիոնի հիմքում ընկած ակտիվի տեսակից՝ օպցիոնը համարվում է արժութային օպցիոն, արժեթղթերով օպցիոն կամ այլ ակտիվներով օպցիոն:

12) **«Սվոփ գործարք կամ սվոփ»**՝

**ա. Արժութային սվոփը** համաձայնություն է, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք), ինչպես նաև *պայմանագրով նախապես սահմանված* տոկոսագումարներ փոխանակելու պայմանով: Սվոփի այս տեսակի դեպքում կարող են փոխանակվել ֆիքսված տոկոսադրույքը լողացող տոկոսադրույքի հետ, ինչպես նաև 2 տարբեր լողացող տոկոսադրույքները:

**բ. Փոխարժեքային սվոփը** արժութային սվոփի պարզ տեսակ է, որը նախատեսում է պայմանագրով սահմանված փոխարժեքով (սփոթ փոխարժեք) երկու արժույթների փոխանակում (առք/վաճառք)՝ այդ արժույթները պայմանագրով սահմանված ժամկետում և փոխարժեքով (ֆորվարդ փոխարժեք) հետ փոխանակելու (վաճառք/առք) պայմանով:

**գ. Տոկոսադրույքային սվոփը** համաձայնություն է, որը նախատեսում է տոկոսային վճարումների տեսքով դրամական հոսքերի փոխանակում: Տոկոսադրույքային սվոփի պարագայում հիմքում ընկած դրամական միջոցները չեն փոխանակվում, այլ փոխանակվում են միայն այդ դրամական միջոցների նկատմամբ հաշվարկված տոկոսային վճարումները: Սվոփի այս տեսակի դեպքում կարող են փոխանակվել ֆիքսված տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները լողացող տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարների հետ, ինչպես նաև 2 տարբեր լողացող տոկոսադրույքներով հաշվարկված տոկոսագումարները:

13) **«Պետական արժեթղթեր»**՝ Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կամ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թողարկված արժեթղթեր:

14) **«Հասցեական գործարք»** կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպված շուկաներում առևտրի մասնակիցների կողմից իրենց հայտնի այլ առևտրի մասնակիցներին ուղղված առաջարկների (հայտերի) հիման վրա կնքվող գործարքներ:

15) **«Կանոնակարգ 4/02»** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին» թիվ 44Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02:

**(2-րդ կետը փոխ., լրաց., խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, փոխ. 06.11.12թ. թիվ 298Ն, փոխ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացությունները ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

## ԲԱԺԻՆ II. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

### ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Ներդրումային ընկերությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝ նշված պարբերականությամբ.

| Հաշվե-տվության թիվը | Հաշվետվության անվանումը | Ներկայացման հա-ճախականությունը |
|---|---|---|
| *1* | *2* | *3* |
| 1. | Հաշվեկշիռ | ամսական, տարեկան |
| 2. | Հաշվետվություն եկամուտների և ծախսերի վերաբերյալ | ամսական, տարեկան |
| 3. | Ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն 1 նորմատիվների վերաբերյալ | ամսական, սույն կանոնակարգի 20.1 կետում սահմանված |

| | | |
|---|---|---|
| | | ժամկետում |
| 4. | Հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման կամ փոփոխության վերաբերյալ | կանոնադրական կապիտալի ձևավորման և յուրաքանչյուր փոփոխության դեպքում |
| 5. | Հաշվետվություն նորմատիվային ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ | ամսական |
| 6. | Արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ | օրական |
| 7. | Հաշվետվություն արժեթղթերի փաթեթի կառավարման վերաբերյալ | ամսական |
| 8. | Հաշվետվություն արժեթղթերի փաթեթի կառուցվածքի վերաբերյալ | ամսական |
| 9. | Հաշվետվություն արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ | ամսական |
| 10. | Հաշվետվություն պահառության վերցված ոչ պետական արժեթղթերի վերաբերյալ | ամսական |
| 11. | Հաշվետվություն արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների վերաբերյալ | օրական |
| 12. | Հաշվետվություն արտարժութային դիրքերի վերաբերյալ | շաբաթական |
| 13. | **(13-րդ կետը ուժը կորցրել է 30.03.10թ. թիվ 55 Ն որոշմամբ)** | |
| 14. | **(14-րդ կետը ուժը կորցրել է 30.03.10թ. թիվ 55 Ն որոշմամբ)** | |
| 15. | **(15-րդ կետը ուժը կորցրել է 30.03.10թ. թիվ 55 Ն որոշմամբ)** | |
| 16. | **(16-րդ կետը ուժը կորցրել է 30.03.10թ. թիվ 55 Ն որոշմամբ)** | |
| 17. | **(17-րդ կետը ուժը կորցրել է 05.05.15թ. թիվ 114Ն)** | եռամսյակային |
| 18. | Հաշվետվություն պահառության վերցված պետական արժեթղթերի վերաբերյալ | շաբաթական ամսական |
| 19. | **(19-րդ կետը ուժը կորցրել է 06.11.12թ. թիվ 298 Ն որոշմամբ)** | |

**(4-րդ կետը փոփ., լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 08.09.09թ. թիվ 272Ն, փոփ. 30.03.10թ. թիվ 50Ն, փոփ. 07.12.10թ. թիվ 324Ն, փոփ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

5. Սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված Թիվ 6, 7, 8, 9, 10 և 11, 18 հաշվետվությունները ներկայացվում են՝ կախված մատուցվող ներդրումային ծառայության կամ ոչ հիմնական ծառայության տեսակից, մասնավորապես՝

1) Թիվ 6 հաշվետվական ձևը ներկայացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և (կամ) 4-րդ կետերով սահմանված ներդրումային ծառայության մատուցման դեպքում: Սույն հաշվետվական ձևը ներկայացնում են նաև այն ներդրումային ընկերությունները, որոնք չեն մատուցում սույն ենթակետով սահմանված ծառայությունները, սակայն իրենց անունից և իրենց հաշվին կատարում են

արժեթղթերով գործարքներ, որը կրում է ոչ պարբերական բնույթ և չի կազմում տվյալ ներդրումային ընկերության հիմնական գործունեության մաս,

2) Թիվ 7 հաշվետվական ձևը ներկայացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված ներդրումային ծառայության մատուցման դեպքում,

3) Թիվ 9 հաշվետվական ձևը ներկայացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված ներդրումային ծառայության մատուցման դեպքում,

4) Թիվ 10 և 18 հաշվետվական ձևերը ներկայացվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ոչ հիմնական ծառայության մատուցման դեպքում,

5) Թիվ 11 հաշվետվական ձևը ներկայացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ոչ հիմնական ծառայության մատուցման դեպքում:»:

**(5-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, փոխ. 08.09.09թ. թիվ 272Ն, լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

5.1. **(5.1-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, ուժը կորցրել է 05.05.15թ. թիվ 114Ն)**

6. **(6-րդ կետը ուժը կորցրել է 06.11.12թ. թիվ 298 Ն որոշմամբ):**

7. **(7-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն, ուժը կորցրել է 06.11.12թ. թիվ 298Ն որոշմամբ)**

8. Բանկերը, որոնք մատուցում են ներդրումային ծառայություններ, բացի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 3-ի 2-րդ կետով սահմանված հաշվետվություններից, ներկայացնում են սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված Թիվ 6, 7, 8, 9, 10 և (կամ) 18 հաշվետվությունները՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի 5-րդ կետի պահանջները:

**(8-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն, փոխ. 08.09.09թ. թիվ 272Ն, խմբ. 30.03.10թ. թիվ 55Ն, փոխ. 05.05.15թ. թիվ 114 Ն)**

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

9. Սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով (Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով)՝ Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված

օրինակելի նմուշին (ֆայլին) համապատասխան, որոնց ձևերը սահմանված են սույն կանոնակարգի ՀԱՎԵԼՎԱԾ 1 - ՀԱՎԵԼՎԱԾ 16-ով: Սի-Բի-Էյ-նեթ համակարգին միացված չլինելու դեպքում հաշվետվության էլեկտրոնային տարբերակը Կենտրոնական բանկ է ներկայացվում ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգերի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

**(9-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

10. **(10-րդ կետը ուժը կորցրել է 06.11.12թ. թիվ 298 Ն որոշմամբ):**

11. Բանկերը սույն կանոնակարգով սահմանված՝ իրենց կողմից ներկայացման ենթակա հաշվետվությունները ներկայացնում են սույն կանոնակարգում սահմանված ժամկետներում և կարգով:

12. Հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն:

**(12-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն, փոխ. 06.11.12թ. թիվ 298Ն)**

13. Հաշվետվության անվանման կոդն ունի հետևյալ կառուցվածքը:

| Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կոդը | գծիկ | հաշվետվության համարը | կետ | հապավումը |
|---|---|---|---|---|

| XXXXX | _ | XXXX | . | Xls |
|---|---|---|---|---|

14. **«Հաշվետվության համարը»** սյունակում լրացվող հաշվետվության համարի առաջին երկու նիշերը բնութագրում են ընկերության կողմից մատուցվող ֆինանսական ծառայությունները՝ ներդրումային ընկերության համար՝ NY, ներդրումային ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող բանկերի համար՝ NB, իսկ 3-4-րդ նիշերը՝ հաշվետվության հերթական համարը: Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է:

**(14-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն, փոխ. 06.11.12թ. թիվ 298Ն)**

15. Շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում «Ամսաթիվը…..թ.-ից մինչև ……….. թ.» լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի առաջին և վերջին օրվա ամսաթվերը: Ընդ որում՝ հաշվետվությունները կազմելիս մեկ տարին պետք է հասկանալ 365 կամ 366 օր, այսինքն՝ օրացուցային օրերի քանակը:

**(15-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

16. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները պետք է պարունակեն թվային հավաստագրեր, եթե դրանք չեն ուղարկվում Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով:

**(16-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

17. Օրական հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 17:00, որում ներառվում են տվյալ օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ը կնքված գործարքների (կատարված գործառնությունների) վերաբերյալ տեղեկությունները, եթե սույն կանոնակարգով հաշվետվության կոնկրետ ձևի համար այլ բան սահմանված չէ: Ընդ որում, եթե օրական հաշվետվություններում ներառվող տեղեկություններում նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ որևէ փոփոխություն տեղի չի ունեցել, ապա հաշվետվությունները ներկայացվում են միայն նշելով ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը և հաշվետվության ներկայացման ամսաթիվը` առանց լրացնելու աղյուսակի համապատասխան սյունակները:

**(17-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, փոխ. 06.11.12թ. թիվ 298Ն)**

18. Շաբաթական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը (ներառյալ):

19. Ամսական և եռամսյակային հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը (ներառյալ):

20. Տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը (ներառյալ):

**(20-րդ կետը լրաց. 08.09.09թ. թիվ 272Ն, փոխ. 07.12.10թ. թիվ 324Ն, փոխ. 06.11.12թ. թիվ 298Ն)**

20.1. Թիվ 3 հաշվետվության 2-րդ աղյուսակը ներկայացվում է սույն կանոնակարգի 39.3-րդ կետում սահմանված դեպքերի ի հայտ գալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտը: Անկախ այն հանգամանքից 39.3-րդ կետում սահմանված դեպքերն ի հայտ են եկել, թե ոչ, սույն աղյուսակը պարտադիր ներկայացման է ենթակա ամսական կտրվածքով:

**(20.1-րդ կետը լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն)**

21. Թիվ 4 հաշվետվությունը ներկայացվում է մինչև տվյալ ներդրումային ընկերության բաժնետոմսերի (բաժնեմասերի) ռեեստրը վարողի կողմից բաժնետոմսերի (բաժնեմասերի) գրանցմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Նոր ստեղծվող ներդրումային ընկերությունների համար սույն հաշվետվական ձևը ներկայացվում է մինչև ներդրումային ընկերության գրանցման և լիցենզավորման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

**(21-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, խմբ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

~~22.~~ (22-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, ուժը կորցրել է 05.05.15թ. թիվ 114Ն)

23. Եթե հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտի օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Այն դեպքերում, երբ հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը ներդրումային ծառայություններ մատուցող անձի համար աշխատանքային է, իսկ Կենտրոնական բանկի համար՝ ոչ աշխատանքային, ապա հաշվետվության ներկայացման վերջին օր է համարվում Կենտրոնական բանկի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, ընդ որում՝ այս դեպքում օրական հաշվետվություններ ներկայացնելիս ներդրումային ծառայություններ մատուցող անձի համար աշխատանքային համարվող հաշվետու օրերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Կենտրոնական բանկի համար ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա հաշվետվության մեջ:

**(23-րդ կետը լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

24. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող, սույն կանոնակարգով սահմանված ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ սույն կանոնակարգի 9-րդ կետի համաձայն: Ընդ որում, միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար մի քանի ճշգրտված հաշվետվությունների ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին ճշգրտված հաշվետվությունը:

(24-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)

25. (25-րդ ուժը կորցրել է 05.05.09թ. թիվ 115 Ն որոշմամբ):

26. Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը պետք է հնարավոր լինի ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, չպետք է լրացվի «յունիկոդ»-ով, երկու լրացված տողերի միջև ամբողջությամբ դատարկ տողեր չպետք է լինեն, և այն պետք է զերծ լինի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունից: Սույն կետի պահանջը չի տարածվում ներդրումային ծառայություններ մատուցող անձի վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում:

(26-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)

27. Հաշվետվությունները լրացնելիս ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների անունները, վերջիններիս վերաբերող այլ տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանց չակերտների, միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան): Բացառություն են կազմում բանկերի Սվիֆտ կոդերը, Տելեքս համարները, արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերը, արժույթի ISO և այլ կոդերը:

**(27-րդ կետը փոխ., լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

28. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում պարունակվող տեղեկությունները պետք է լինեն արժանահավատ և ամբողջական:

**(28-րդ կետը փոխ. 06.11.12թ. թիվ 298Ն, փոխ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

## ԳԼՈՒԽ 3. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻՑ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ, ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

**(վերնագիրը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

29. Կենտրոնական բանկն իրավունք ունի ներդրումային ծառայություններ մատուցող անձից, վերջինիս պաշտոնատար անձանցից ծանուցմամբ պահանջել նրա կողմից իրականացվող ներդրումային ծառայությունների մատուցման գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղեկանքներ, բացատրություններ և/կամ այլ փաստաթղթեր:

**(29-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

30. Ներդրումային ծառայություններ մատուցող անձին ծանուցում կարող է տրվել թղթային եղանակով, հեռախոսագրի, Կենտրոնական բանկի պաշտոնական էլեկտրոնային փոստի, Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով կամ կապի՝ սահմանված այլ պահուստային միջոցներով, ընդ որում՝ թղթային եղանակով ծանուցման փաստաթուղթը ստորագրվում է Կենտրոնական բանկի ներդրումային ծառայություններ մատուցող անձանց վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի կողմից:

**(30-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

31. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը կամ նրա պաշտոնատար անձը պարտավոր են պահանջվող լրացուցիչ տեղեկանքները, բացատրությունները և (կամ) այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնել սույն կանոնակարգի 30-րդ կետում նշված ծանուցումը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կենտրոնական բանկի կողմից ներկայացման ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

**(31-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

32. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը պահանջվող լրացուցիչ տեղեկանքները, բացատրությունները և/կամ փաստաթղթերը ներկայացնում է թղթային եղանակով կամ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով: Սի-Բի-Էյ-նեթ համակարգին միացված չլինելու դեպքում դրանք ներկայացվում են ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգերի խափանման դեպքում թղթային եղանակով չներկայացնելու դեպքում հաշվետվությունները ներկայացվում

են մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրությունը: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը պետք է պարունակեն թվային հավաստագրեր, եթե դրանք չեն ուղարկվում Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով:

**(32-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

33. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել Կենտրոնական բանկի ներդրումային ծառայություններ մատուցող անձանց վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանում՝ հաշվետվությունների վերաբերյալ պարզաբանումներ ու մեկնաբանումներ տալու համար:

## ԲԱԺԻՆ III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

### ԳԼՈՒԽ 1. ՀԱՇՎԵԿՇԻՌ՝ ԹԻՎ 1 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

34. Թիվ 1 հաշվետվությունը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանով համատեղ հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին» և «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգին» համապատասխան:

**(34-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, 30.03.10թ. թիվ 55Ն, խմբ. 06.11.12թ. թիվ 298Ն)**

34.1. Թիվ 1 հաշվետվական ձևում «I խմբի արտարժույթ» և «II խմբի արտարժույթ» սյունակներում արտարժույթի խմբավորումն իրականացվում է համաձայն Կանոնակարգ 4/02-ի: «I խմբի արտարժույթ», «II խմբի արտարժույթ» սյունակներում լրացվում են ընկերության՝ արտարժույթով ակտիվների և պարտավորությունների մնացորդները, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և պարտավորությունների մնացորդները: Յուրաքանչյուր արժութային սյունակում ներկայացվող թվերը դասակարգվում են ըստ ռեզիդենտության: Արտարժութային հոդվածները լրացվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվարկված հաշվետու օրվա

համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Հաշվետվությունները պարունակում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա (եթե ընկերությունն աշխատել է նաև շաբաթ, կիրակի կամ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրը, ապա՝ այդ օրվա) դրությամբ առկա տվյալները: Ներդրումային ընկերության կողմից ինքնուրույն բացված հաշիվները Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում չեն արտացոլվում որպես առանձին հաշիվ:

**(34.1 կետը լրաց. 06.11.12թ. թիվ 298Ն)**

34.2 Թիվ 1 հաշվետվության հոդվածներին կից ներկայացված «NV» հապավումով տողում ներկայացվում են տվյալ տողի հիմնական հոդվածում ընդգրկված տվյալ ակտիվի կամ պարտավորության մայր գումարը, իսկ «NI» հապավումով տողում՝ անվանական տոկոսադրույքով հաշվեգրված և դեռ չվճարված տոկոսագումարը:
**(34.2 կետը լրաց. 06.11.12թ. թիվ 298Ն)**

34.3. Թիվ 1 հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով:
**(34.3 կետը լրաց. 06.11.12թ. թիվ 298Ն)**

## ԳԼՈՒԽ 2. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 2 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

35. Թիվ 2 հաշվետվությունը լրացվում է աճողական տվյալներով՝ տարեսկզբից ստացված տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների, կատարված տոկոսային և ոչ տոկոսային ծախսերի չափով: Ընդ որում՝ սույն հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով:
**(35-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն)**

36. Առանձին տողերի տարանջատումն ըստ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների՝ կատարվում է եկամուտների ստացման աղբյուրի տեսանկյունից: Օրինակ՝ ոչ ռեզիդենտին ռեզիդենտի կողմից թողարկված արժեթղթի վաճառքից ստացված եկամուտը պետք է արտացոլվի «Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտ» տողի «ոչ ռեզիդենտ» ենթատողում:

37. «Սպասարկող անձնակազմ» տողում գրվում է ներդրումային ընկերության բուն գործունեության հետ չառնչվող աշխատակիցների քանակը (մասնավորապես՝ վարորդ, հավաքարար, պահակ, անվտանգության աշխատող, գործավար և այլն):

## ԳԼՈՒԽ 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 3 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

38. Թիվ 3 հաշվետվությունում ներկայացվում են ընդհանուր կապիտալի նվազագույն չափի ու ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվների վերաբերյալ տեղեկությունները, որոնք հաշվարկվում են Կանոնակարգ 4/02-ով սահմանված կարգով: Այն օրերին, երբ ներդրումային ընկերության հաշվեկշիռը փոփոխություն չի կրել (ներառյալ ոչ աշխատանքային օրերը), սույն հաշվետվությունում լրացվում են նախորդ օրվա տվյալները: Եթե ներդրումային ընկերությունը Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ նախատեսված լինելու դեպքում ձևավորել է պահուստներ, ապա տվյալ պահուստների մեծությունը նույնպես լրացվում է սույն հաշվետվությունում:

39. Թիվ 3 հաշվետվությունը բաղկացած է 14 աղյուսակից, որոնք լրացվում են սույն կանոնակարգի 39.1-ից 39.28.-րդ կետերի համաձայն:

39.1. **1-ին աղյուսակում** ներկայացվում և ամփոփվում են հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկին մասնակցող ամսվա միջին օրական ցուցանիշներն ու տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունները՝ հաշվարկված համաձայն Կանոնակարգ 4/02-ի: 1-ին աղյուսակի 1-ից 5-րդ սյունակներում ամփոփվում են, համապատասխանաբար, ընդհանուր կապիտալի, վարկային ռիսկի, արտարժութային ռիսկի, տոկոսադրույքի ռիսկի, բաժնային արժեթղթերի գնային ռիսկի նորմատիվային ամսվա միջին օրական մեծությունները, իսկ 6-րդ սյունակում՝ գործառնական ռիսկի նորմատիվային մեծությունը: 2-րդ սյունակի վարկային ռիսկի հաշվարկն իրականացվում է սույն հաշվետվության 3, 4, 5, 6, 7 աղյուսակների համաձայն: 3-րդ սյունակի արտարժութային ռիսկի հաշվարկն իրականացվում է 8-րդ և 9-րդ աղյուսակների համաձայն, 4-րդ սյունակի տոկոսադրույքի ռիսկի հաշվարկն իրականացվում է 11-րդ և 12-րդ սյունակների համաձայն, 5-րդ սյունակի բաժնային արժեթղթերի գնային ռիսկի հաշվարկն իրականացվում է 13-րդ աղյուսակի համաձայն, իսկ 6-րդ սյունակի գործառնական ռիսկի հաշվարկը՝ 14-րդ աղյուսակի համաձայն:

39.2. **2-րդ աղյուսակում** ներկայացվում են ըստ ամսվա բոլոր օրերի ընդհանուր կապիտալի հաշվեկշռային և նորմատիվային մեծությունները, ինչպես նաև նորմատիվային կապիտալի հաշվարկի համար Կանոնակարգ 4/02-ով նախատեսված անհրաժեշտ նվազեցումները, ընդ որում՝ այս նվազեցումները լրացվում են բացարձակ արժեքով:

39.3. Սույն կանոնակարգի 20.1.-րդ կետում նշված ժամկետում Թիվ 3 հաշվետվությունը ենթակա է ներկայացման այն դեպքում, երբ

1) օրական կտրվածքով հաշվարկելիս տվյալ օրվա փաստացի նորմատիվային ընդհանուր կապիտալի մեծությունը նվազել է Կանոնակարգ 4/02-ով սահմանված նորմատիվային ընդհանուր կապիտալի նվազագույն չափի 120 տոկոսից: Այս դեպքում, սույն հաշվետվությունը ներկայացվում է ամեն անգամ ընդհանուր կապիտալի նվազագույն չափի 120 տոկոսից նվազելու դեպքում: Այսինքն՝ եթե

առաջին անգամ ընդհանուր կապիտալի նվազագույն չափի 120 տոկոսից նվազելու դեպքում հաշվետվության ներկայացմանը անմիջականորեն հաջորդում է որոշակի ժամանակաշրջան, որի ընթացքում նորմատիվային ընդհանուր կապիտալի մեծությունը պահպանվում է ցածր իր նվազագույն չափի 120 տոկոսից, սակայն հավասար կամ մեծ նորմատիվային ընդհանուր կապիտալի նվազագույն չափից, ապա տվյալ ժամանակաշրջանի համար սույն հաշվետվությունը չի ներկայացվում: Սակայն, եթե նորմատիվային ընդհանուր կապիտալը նորից բարձրանում է իր նվազագույն չափի 120 տոկոսից և կրկին իջնում այդ սահմանաչափից, ապա սույն հաշվետվությունը ներկայացվում է,

2) օրական կտրվածքով հաշվարկելիս տվյալ օրվա փաստացի նորմատիվային ընդհանուր կապիտալի մեծությունը փոքր է Կանոնակարգ 4/02-ով սահմանված նորմատիվային ընդհանուր կապիտալի նվազագույն չափից:

39.4. Սույն կանոնակարգի 39.3-րդ կետով սահմանված դեպքում 2-րդ աղյուսակը Կենտրոնական բանկ ներկայացնելիս Թիվ 3 հաշվետվության 2-րդ աղյուսակում չի լրացվում «թ. -ից մինչև ―――――թ.» մասը, «Ամսաթիվը» մասում նշվում է 2-րդ աղյուսակի Կենտրոնական բանկ ներկայացման ամսաթիվը և լրացվում է ամսվա այն օրվա տողը, որի համար հաշվարկելիս ի հայտ է եկել սույն կանոնակարգի 39.3-րդ կետով սահմանված դեպք(եր)ը:

39.5. **3-րդ աղյուսակում** ներկայացվում են վարկային ռիսկի հաշվարկը՝ ըստ օրերի: Ընդ որում, 3-րդ աղյուսակում չեն ներկայացվում այն ակտիվները, որոնց վրա տարածվում է վարկային ռիսկի զսպման մեխանիզմը (այսուհետ՝ ՎՌԶՄ): 3-րդ աղյուսակի 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ սյունակներում լրացվում են ըստ ռիսկի կշիռների խմբավորված ակտիվների հանրագումարները՝ հազար դրամներով, իսկ 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ և 20-րդ սյունակներում՝ համապատասխան ռիսկի կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստների մեծությունները՝ հազար դրամներով: 21-րդ սյունակում ամփոփվում է այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չի տարածվում ՎՌԶՄ-ն:

**(39.5-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 4Ն, խմբ. 27.11.12թ. թիվ 330Ն)**

39.6. **4-րդ աղյուսակում** լրացվում է ՎՌԶՄ ենթակա ակտիվների գծով վարկային ռիսկի հաշվարկն՝ ըստ օրերի: Ընդ որում՝ 4-րդ աղյուսակում ներկայացվում են այն ակտիվները, որոնց մեծությունը, համաձայն Կանոնակարգ 4/02-ի, չի ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով:

39.7. Թիվ 3 հաշվետվության 4-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«ՎՌԶՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը»** սյունակում լրացվում է ՎՌԶՄ-ի ենթակա ակտիվների ընդհանուր գումարը՝ հազար դրամներով:

2) **«Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»** սյունակում լրացվում է ՎՌՁՄ ենթակա ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը՝ բացարձակ արժեքով (հազար դրամներով):

3) **«Ակտիվների մեծությունը, որոնց ռիսկի կշիռը ՎՌՁՄ կիրառման արդյունքում փոխվել է»** սյունակում լրացվում է ՎՌՁՄ ենթակա ակտիվների այն մեծությունը՝ հազար դրամներով, որոնց ռիսկի կշիռը ՎՌՁՄ կիրառման արդյունքում փոխվել է:

4) **«ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը»** սյունակում լրացվում է ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը:

5) **«5-ից 14-րդ»** սյունակներում լրացվում են ակտիվների մեծությունները (հազար դրամներով)՝ ըստ ռիսկի կշիռների՝ համապատասխան հնարավոր կորուստների պահուստի չափով նվազեցնելուց հետո: Ընդ որում, ակտիվի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության (կամ ապահովվածություն տրամադրող անձի) ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշռին համապատասխան սյունակում:

Ենթադրենք, փոխառության մեծությունը 100 դրամ է, ենթադրենք պահուստը՝ 10 դրամ, փոխառուի ռիսկի կշիռը՝ 100 տոկոս: Փոխառության գծով առկա է ֆինանսական գրավ, որի ճշգրտված արժեքը 60 դրամ է: Ֆինանսական գրավի ռիսկի կշիռը 50 տոկոս է: Այս օրինակում փոխառության հաշվեկշռային արժեքն արտացոլվում է 1-ին սյունակում 100 դրամի չափով, պահուստը 10 դրամ է, որն արտացոլվում է 2-րդ սյունակում: 3-րդ սյունակում կլրացվի 60 դրամ, իսկ 4-րդ՝ «ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը» սյունակում, լրացվում է 60*(100%-50%)=30 դրամ (որտեղ 60-ը այն մեծությունն է, որի ռիսկի կշիռը փոխվում է ՎՌՁՄ կիրառելիս, 100 տոկոսը ակտիվի ռիսկի կշիռն է մինչև ՎՌՁՄ կիրառելը, իսկ 50 տոկոսը՝ ակտիվի՝ ՎՌՁՄ կիրառման արդյունքում ստացվող նոր ռիսկի կշիռը): Միևնույն ժամանակ, փոխառության ապահովված մասը՝ 60 դրամը, պետք է լրացնել 9-րդ սյունակում: Իսկ փոխառության չապահովված մասը ((100-10)-60=30-ը) պետք է արտացոլել 11-րդ սյունակում՝ 30 դրամ գումարի չափով:

6) **15-րդ** սյունակում ամփոփվում է ՎՌՁՄ-ի ենթակա այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց մեծությունը չի ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով:

**(39.7-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 4Ն, փոխ., լրաց. 27.11.12թ. թիվ 330Ն)**

39.8. **5-րդ աղյուսակում** լրացվում է ՎՌՁՄ ենթակա ակտիվների գծով վարկային ռիսկի հաշվարկն ըստ օրերի, ընդ որում՝ սույն աղյուսակում լրացվում են միայն այն

ակտիվները, որոնց մեծությունները, համաձայն Կանոնակարգ 4/02-ի, ճշգրտվում են արժեքի տատանման գործակիցներով (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր):

39.9. Թիվ 3 հաշվետվության 5-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«ՎՌՁՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը»** սյունակում լրացվում է ՎՌՁՄ-ի ենթակա ակտիվների ընդհանուր գումարը՝ հազար դրամներով:

2) **«Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»** սյունակում՝ ՎՌՁՄ ենթակա ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը՝ բացարձակ արժեքով՝ հազար դրամներով:

3) **«Ակտիվների մեծությունը, որոնց ռիսկի կշիռը ՎՌՁՄ կիրառման արդյունքում փոխվել է»** սյունակում լրացվում է ՎՌՁՄ-ի ենթակա ակտիվների այն մեծությունը՝ հազար դրամներով, որոնց ռիսկի կշիռը ՎՌՁՄ կիրառման արդյունքում փոխվել է:

4) **«ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը»** սյունակում լրացվում է ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը:

5) **«5-ից 14-րդ»** սյունակներում լրացվում են ակտիվների մեծությունները՝ ըստ ռիսկի կշիռների՝ համապատասխան հնարավոր կորուստների պահուստի չափով նվազեցնելուց և արժեքի տատանման գործակցով ճշգրտելուց հետո: Ընդ որում, ակտիվի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության (կամ ապահովվածություն տրամադրող անձի) ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշռին համապատասխան սյունակում:

   Ենթադրենք ներդրումային ընկերության կողմից ձեռք բերված A+ վարկանիշ ունեցող օտարերկրյա բանկի կողմից թողարկված պարտատոմսի հաշվեկշռային արժեքը 100 դրամ է, մարմանը մնացած ժամկետը՝ 3 տարի: Պարտատոմսի արժեքի տատանման գործակիցը 6 տոկոս է, պահուստը՝ ենթադրենք 50 դրամ, պարտատոմսի ռիսկի կշիռը 50 տոկոս է: Պարտատոմսի գծով առկա է ապահովվածություն (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից A+ վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպության կողմից տրված երաշխիք)՝ 30 դրամ գումարի չափով, որի ռիսկի կշիռը 20 տոկոս է: Այս օրինակում պարտատոմսի հաշվեկշռային արժեքն արտացոլվում է առաջին սյունակում՝ 100 դրամի չափով, 50 դրամ պահուստը՝ 2-րդ սյունակում: 3-րդ սյունակում կլրացվի 30 դրամ, իսկ 4-րդում՝ 30*(50%-20%)=9 դրամ (որտեղ 30-ը այն մեծությունն է, որի ռիսկի կշիռը փոխվում է ՎՌՁՄ կիրառելիս, 50 տոկոսը ակտիվի ռիսկի կշիռն է մինչև ՎՌՁՄ կիրառելը, իսկ 20 տոկոսը՝ ակտիվի՝ ՎՌՁՄ կիրառման արդյունքում ստացվող նոր ռիսկի կշիռը): Պարտատոմսի ապահովված մասը՝ 30 դրամը, պետք է լրացնել 7-րդ սյունակում: Պարտատոմսի

չապահովված մասը՝ (100-50)*(1+6%)-30=23 դրամը, պետք է արտացոլել 9-րդ սյունակում:

6) **15-րդ** սյունակում ամփոփվում է ՎՌԶՄ-ի ենթակա այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց մեծությունը ճշգրտվում է արժեքի տատանման գործակիցներով:

**(39.9-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 4Ն, փոխ., լրաց. 27.11.12թ. թիվ 330Ն)**

39.10. **6-րդ աղյուսակում** ներկայացվում են Կանոնակարգ 4/02-ի համաձայն վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վարկային ռիսկի հաշվարկները ըստ օրերի, *որոնց վրա չեն տարածվում ՎՌԶՄ-ները:*

**(39.10-րդ կետը փոխ. 10.01.12թ. թիվ 4Ն)**

39.11. Թիվ 3 հաշվետվության 6-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (դրամային հոդվածներ)»** և **«Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (արտարժութային հոդվածներ)»** սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների մեծությունը՝ հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով՝ հազար դրամներով:

2) **«Երաշխավորություններ»** սյունակում լրացվում է տրամադրված երաշխավորությունների մեծությունը՝ հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով՝ հազար դրամներով:

3) **«Պահուստ»** սյունակում լրացվում է հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների կամ տրամադրված երաշխավորությունների գծով ձևավորված պահուստի մեծությունը՝ հազար դրամներով:

4) **«Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո»** սյունակում լրացվում է վարկային ռիսկի փոխարկման գործոնների կիրառումից հետո հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների կամ տրամադրված երաշխավորությունների գծով վարկային ռիսկի մեծությունը:

5) **«7-19-րդ»** սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների կամ տրամադրված երաշխավորությունների մեծությունը՝ հազար դրամներով, փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորված ըստ ռիսկի կշիռների:

6) **20-րդ** սյունակում ամփոփվում է այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չեն տարածվում ՎՌԶՄ-ները:

**(39.11-րդ կետը փոխ. 10.01.12թ. թիվ 4Ն, խմբ. փոխ., լրաց. 27.11.12թ. թիվ 330Ն)**

39.12. **7-րդ աղյուսակում** ներկայացվում են Կանոնակարգ 4/02-ի համաձայն վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վարկային ռիսկի հաշվարկներն ըստ օրերի, *որոնց վրա տարածվում են ՎՌԶՄ-ները:*

**(39.12-րդ կետը փոխ. 10.01.12թ. թիվ 4Ն)**

39.13. Թիվ 3 հաշվետվության 7-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Հաշվեկշռային վարկային ռիսկի մեծությունը, որի ռիսկի կշիռը ՎՌԶՄ կիրառման արդյունքում փոխվել է»** սյունակում լրացվում է ՎՌԶՄ ենթակա ակտիվների այն մասը, որոնց ռիսկի կշիռը ՎՌԶՄ կիրառման արդյունքում փոխվել է:

2) **«ՎՌԶՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը»** սյունակում լրացվում է ՎՌԶՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը:

3) **«12-ից 21-րդ»** սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների կամ տրամադրված երաշխավորությունների մեծությունները՝ հազար դրամներով, փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորված ըստ ռիսկի կշիռների: ՎՌԶՄ կիրառման դեպքում հետհաշվեկշռային հոդվածի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի ռիսկի կշռին համապատասխան սյունակում:

4) **22**-րդ սյունակում ամփոփվում է այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գծով վարկային ռիսկը, որոնց վրա տարածվում են ՎՌԶՄ-ները:

**(39.13-րդ կետը լրաց. 27.11.12թ. թիվ 330Ն)**

39.13.1. **7.1-րդ աղյուսակում** վարկային ռիսկի հաշվարկման նպատակով ներկայացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջները՝ ներառյալ ածանցյալ գործիքները և (կամ) երաշխավորությունները (այդ թվում՝ այլ անձանց

նկատմամբ պահանջների այն մասը, որոնք ՎՌԶՄ կիրառման արդյունքում պետք է ստանան ներդրումային ֆոնդերի համար նախատեսված ռիսկի կշիռները): Սույն աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) **«Ամսվա օրեր»** սյունակը լրացվում է ըստ հաշվետու ամսվա օրերի հաջորդականության (1, 2, 3,,, 31, որտեղ «1»-ը համընկնում է ամսվա առաջին օրվան, «2»-ը՝ երկրորդ օրվան և այլն): Ընդ որում, եթե միևնույն օրվա հաշվարկում առկա են տարբեր ռիսկի կշիռ ունեցող ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջներ, ապա այդ պահանջների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են առանձին տողերով:
2) **«Ռիսկի կշիռը»** սյունակում լրացվում է Կանոնակարգ 4/02-ի համաձայն հաշվարկված ներդրումային ֆոնդի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:
3) **3-րդ** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդերի նկատմամբ այն պահանջների մեծությունը՝ հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո, որոնց վրա չեն տարածվում ՎՌԶՄ-ները:
4) **4-րդ** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդերի նկատմամբ ՎՌԶՄ-ին ենթակա այն պահանջների մեծությունները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց հետո, որոնք չեն ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով: Ընդ որում, տվյալ պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 4-րդ աղյուսակի 1-ից 4-րդ սյունակներում, իսկ այդ պահանջների ռիսկով կշռված մեծությունը՝ 4-րդ աղյուսակի 15-րդ սյունակում:
5) **5-րդ** սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ ՎՌԶՄ-ի ենթակա այն պահանջների մեծությունները, որոնք ճշգրտվում են արժեքի տատանման գործակիցներով: Ընդ որում, տվյալ պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 5-րդ աղյուսակի 1-ից 4-րդ սյունակներում, իսկ այդ պահանջների ռիսկով կշռված մեծությունը՝ 5-րդ աղյուսակի 15-րդ սյունակում:
6) **6-րդ** սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի գծով այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գումարները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց և ՎՌՓԳ կիրառելուց հետո, որոնց վրա չի տարածվում ՎՌԶՄ-ն: Ընդ որում, հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 6-րդ աղյուսակի 1-ից 9-րդ սյունակներում, իսկ դրանց ռիսկով կշռված մեծությունը՝ 6-րդ աղյուսակի 20-րդ սյունակում:
7) **7-րդ** սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի գծով այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գումարները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց և ՎՌՓԳ կիրառելուց հետո, որոնց վրա

տարածվում է ՎՌՁՄ-ն: Ընդ որում, հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 7-րդ աղյուսակի 1-ից 11-րդ սյունակներում, իսկ դրանց ռիսկով կշռված մեծությունը՝ 7-րդ աղյուսակի 22-րդ սյունակում: Եթե 1-ին սյունակում լրացվող հաշվետու ամսվա օրերը և 2-րդ սյունակում լրացվող ռիսկի կշիռները համընկնում են, ապա 7.1-րդ աղյուսակի 3-ից 7-րդ սյունակներում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջների մեծությունների հանրագումարները: Այն դեպքում, երբ ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջները կամ դրանց մի մասը ՎՌՁՄ կիրառման արդյունքում պետք է ստանան այլ անձանց համար նախատեսված ռիսկի կշիռները, ապա այդ պահանջները չեն լրացվում 7.1 աղյուսակում և լրացվում են 4-րդ, 5-րդ կամ 7-րդ աղյուսակներում:

**(39.13.1 կետը լրաց. 27.11.12թ. թիվ 330Ն)**

39.14. Թիվ 3 հաշվետվության 7-րդ աղյուսակի մնացած սյունակները լրացվում են աղյուսակ 6-ում սահմանված լրացման հրահանգին համապատասխան:

39.15. **8-րդ և 9-րդ աղյուսակներում** ներկայացվում է արտարժութային ռիսկի տարրերի և արտարժութային ռիսկի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 4/02-ի: Ըն որում, կախված այն բանից, թե ներդրումային ընկերությունը արտարժութային ռիսկի հաշվարկի որ մեթոդաբանությունն է ընտրել, լրացնում է այս երկու էջերից միայն մեկը:

39.16. **8-րդ աղյուսակը** լրացվում է միայն այն դեպքում, երբ ներդրումային ընկերությունն ընտրել է արտարժութային ռիսկի գնահատման ստանդարտ մեթոդաբանությունը:

39.17. 8-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Արտարժութային երկար դիրքերի հանրագումար»** սյունակում լրացվում է արտարժութային երկար դիրքերի հանրագումարը՝ հազար դրամներով:
2) **«Արտարժութային կարճ դիրքերի հանրագումար»** սյունակում լրացվում է կարճ դիրքերի հանրագումարը՝ բացարձակ արժեքով (հազար դրամներով),
3) **«Թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորների և մետաղական հաշիվների բաց դիրքերի բացարձակ արժեքների հանրագումար»** սյունակում լրացվում է թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների բաց դիրքերի բացարձակ արժեքների հանրագումարը:

**(39.17-րդ կետը փոխվել է 10.01.12թ. թիվ 4Ն)**

39.18. **9-րդ աղյուսակը** լրացվում է միայն այն դեպքում, երբ ներդրումային ընկերությունը ընտրել է արտարժութային ռիսկի գնահատման ՎաՌ-մեթոդաբանությունը:

39.19. 9-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Օրական ՎաՌ»** սյունակում լրացվում է արտարժութային օրական ՎաՌ-երի մեծությունը՝ ըստ օրերի:

2) **«Գերազանցող օրերի քանակը»** սյունակում լրացվում է, թե հաշվետու ամսվան նախորդող 250 աշխատանքային օրերի ընթացքում փոխարժեքի փոփոխության պատճառով քանի անգամ է ներդրումային ընկերության օրական կորուստների մեծությունը գերազանցել տվյալ օրվա արտարժութային օրական ՎաՌ-ը:

39.20. **10-րդ աղյուսակում** լրացվում են շուկայական ռիսկի հաշվարկում տոկոսադրույքի և բաժնային արժեթղթերի գնային ռիսկերը ներառելու պահանջի առկայությունը որոշելու համար Կանոնակարգ 4/02-ով այդ նպատակով սահմանված ցուցանիշները, այն է.

1) շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հանրագումարի և ընդհանուր հաշվեկշռային ակտիվների հարաբերությունը (տոկոսային արտահայտությամբ),

2) շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հանրագումարի և ներդրումային ընկերության նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը (տոկոսային արտահայտությամբ):

**(39.20-րդ կետը լրաց. 10.01.12թ. թիվ 4Ն)**

39.21. 10-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Ընդհանուր հաշվեկշռային ակտիվներ»** սյունակում լրացվում է հաշվեկշռային ակտիվների հանրագումարը՝ հազար դրամներով,

2) **«Շ**ահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող **և վաճառքի համար մատչելի ակտիվներ»** սյունակում լրացվում է ներդրումային ընկերության շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքը՝ հազար դրամներով:

3) **«Նորմատիվային ընդհանուր կապիտալ»** սյունակում լրացվում է սույն հաշվետվության 2-րդ աղյուսակի համաձայն հաշվարկված նորմատիվային ընդհանուր կապիտալի մեծությունը՝ հազար դրամներով:

39.22. 11-13-րդ աղյուսակները լրացման են ենթակա միայն այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ամսվա կամ հաշվետու ամսվա միջին օրական հաշվարկով 39.20-րդ կետի 1-ին ենթակետում նշված ցուցանիշը գերազանցում է 3 տոկոսը, կամ 2-րդ ցուցանիշը՝ 20 տոկոսը:

39.23. **11-րդ աղյուսակում** ներկայացվում է տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 4/02-ի: 11-րդ աղյուսակի 1-ից 26-րդ սյունակներում լրացվում են պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերը՝ խմբավորված ըստ պարտքային արժեթղթերի տեսակների և մինչև մարումն ընկած ժամկետայնությունների՝ համաձայն Կանոնակարգ 4/02-ի: Ընդ որում՝ կարճ դիրքերը լրացվում են բացարձակ արժեքով:

39.24. **12-րդ աղյուսակում** ներկայացվում է տոկոսադրույքի ընդհանուր ռիսկի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 4/02-ի: 1-ից 26-րդ սյունակներում լրացվում են պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերը՝ խմբավորված ըստ պարտքային արժեթղթերի ժամանակային գոտիների և պարտքային արժեթղթերի մինչև մարումն ընկած ժամկետայնությունների՝ համաձայն Կանոնակարգ 4/02-ի, 27-ից 34-րդ սյունակներում լրացվում են Կանոնակարգ 4/02-ի համաձայն ընդհանուր ռիսկի հաշվարկման համար անհրաժեշտ նվազագույն դիրքերը՝ ըստ համապատասխան գոտիների: Ընդ որում՝ կարճ դիրքերը լրացվում են բացարձակ արժեքով:

39.25. **13-րդ աղյուսակում** ներկայացվում են բաժնային արժեթղթերի գնային ռիսկերի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 4/02-ի:

39.26. 13-րդ աղյուսակի «Ա» մասի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումար»** լրացվում է Կանոնակարգ 4/02-ով սահմանված բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարը՝ հազար դրամներով (ըստ օրերի),

2) **«Բաժնային արժեթղթերի կարճ դիրքերի հանրագումար»** կարճ դիրքերի հանրագումարը բացարձակ մեծությամբ (հազար դրամներով)՝ըստ օրերի:

3) **«Բաժնային արժեթղթերի համախառն զուտ դիրք»** սյունակում լրացվում է բաժնային արժեթղթերի երկար և կարճ (բացարձակ մեծությամբ) դիրքերի տարբերությունը՝ հազար դրամներով:

39.27. 13-րդ աղյուսակի «Բ» մասի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումար»** սյունակներում (1-ին և 3-րդ) լրացվում են բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարները (հազար դրամներով)՝ խմբավորված համապատասխանաբար ըստ իրացվելի և դիվերսիֆիկացված բաժնային արժեթղթերի և այլ բաժնային արժեթղթերի:

2) **«Բաժնային արժեթղթերի կարճ դիրքերի հանրագումար»** սյունակներում (2-րդ և 4-րդ) լրացվում են բաժնային արժեթղթերի կարճ դիրքերի հանրագումարները (հազար դրամներով)՝ բացարձակ արժեքով՝ խմբավորված համապատասխանաբար ըստ իրացվելի և դիվերսիֆիկացված բաժնային արժեթղթերի և այլ բաժնային արժեթղթերի:

**14-րդ աղյուսակում** ներկայացվում են գործառնական ռիսկի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 4/02-ի: 14-րդ աղյուսակի 1-ին, 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են Կանոնակարգ 4/02-ով սահմանված ներդրումային ընկերության՝ համապատասխանաբար

հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 3-րդ տարվա, հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 2-րդ տարվա, հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա զուտ եկամուտները: Ընդ որում, նշված սյունակներում համապատասխան մեծությունները լրացվում են միայն այն դեպքերում, երբ համապատասխան տարվա զուտ եկամուտը մեծ կամ հավասար է 0-ի: Այն ներդրումային ընկերությունները, որոնց գործունեության ժամկետը պակաս է 3 տարուց, այդ ներդրումային ընկերությունները 14-րդ աղյուսակի սյունակները լրացնում են հետևյալ տրամաբանությամբ. ենթադրենք ընկերությունը գործունեություն է իրականացրել 1 տարի և 5 ամիս, այս դեպքում լրացվում է «Հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա զուտ եկամուտ» սյունակը, ինչպես նաև «Հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 2-րդ տարվա զուտ եկամուտ» սյունակը, որտեղ լրացվում է 5 ամսվա զուտ եկամուտների մեծությունը:

**(Գլուխ 3-ը խմբ. 30.03.10թ. թիվ 55Ն)**

## ԳԼՈՒԽ 4. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 4 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

**(վերնագիրը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

40. Սույն կանոնակարգի Հավելված 4-ի թիվ 4 հաշվետվությունը ներկայացվում է կանոնադրական կապիտալի ձևավորման (նոր ստեղծվող ընկերությունների համար) և յուրաքանչյուր փոփոխության (համալրման, նվազեցման, ինչպես նաև նախկինում ներկայացված տեղեկություններում այլ փոփոխությունների) դեպքում: 1% և ավելի բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող յուրաքանչյուր բաժնետիրոջ (մասնակցի) գծով տեղեկությունները լրացվում են հաշվետվության աղյուսակի «Ա» մասում: Ընդ որում, եթե միևնույն բաժնետիրոջը (մասնակցին) միաժամանակ պատկանում է և՛ «արտոնյալ», և՛ «սովորական» բաժնետոմս, ապա հաշվետվությունը «Ա» մասում տվյալ բաժնետիրոջ (մասնակցի) համար լրացվում է երկու տողով: 1%-ից ցածր բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող բաժնետերերի (մասնակիցների) գծով տեղեկությունները լրացվում են խմբավորված՝ ըստ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների՝ աղյուսակի «Բ» մասում:

**(40-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

41. Թիվ 4 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) **«Կանոնադրական կապիտալի ձևավորման (փոփոխության) գրանցման ամսաթիվը»** մասում լրացվում է կանոնադրական կապիտալի փոփոխության, այսինքն՝ համալրման կամ նվազեցման (նոր ստեղծվող ընկերությունների համար՝ նոր ձևավորված կանոնադրական կապիտալի)՝ Կենտրոնական բանկում գրանցման ամսաթիվը:

2) **«Ներդրումային ընկերության կազմակերպական-իրավական ձևը»** մասում նշվում է հաշվետու անձի կազմակերպական-իրավական ձևը՝ «բաց բաժնետիրական ընկերություն», «փակ բաժնետիրական ընկերություն» կամ «սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն»:

3) «**Մասնակցի (բաժնետիրոջ) ղեկավարների (խորհրդի (դիտորդ խորհրդի) նախագահ և գործադիր մարմնի ղեկավար) անունը ազգանունը, հայրանունը»** սյունակը լրացվում է միայն այն դեպքում, եթե մասնակիցը (բաժնետերը) իրավաբանական անձ է:

4) **«Սեփականության ձևը»** սյունակում լրացվում է «ֆիզիկական անձ», եթե մասնակիցը (բաժնետերը) ֆիզիկական անձ է: Եթե մասնակիցը (բաժնետերը) իրավաբանական անձ է և իր մասնակցության 50%-ից ավելին պատկանում է պետությանը, ապա սույն սյունակում լրացվում է «պետական», մնացած դեպքերում` «ոչ պետական»:

5) **«Բաժնետոմսի տեսակը»** սյունակը լրացվում է միայն բաժնետիրական ընկերությունների համար «Սովորական» կամ «Արտոնյալ» բառերով` կախված բաժնետոմսի տեսակից:

6) **«Անվանական արժեթղթերի սեփականատերերի (բաժնետերերի) ռեեստրում գրանցման օրը»** սույն սյունակում լրացվում է Կենտրոնական դեպոզիտարիայում բաժնետոմսերի գրանցման օրը: Սույն սյունակը լրացվում է միայն բաժնետիրական ընկերությունների համար:

7) **«Ռեզիդենտությունը»** սյունակը լրացվում է «Ռեզիդենտ» կամ «Ոչ ռեզիդենտ» բառերով` կախված մասնակցի ռեզիդենտությունից:

8) «**Կանոնադրական կապիտալի փոփոխված մասնաբաժնի մեծությունը»** սյունակում լրացվում է բաժնետիրոջ (մասնակցի) մասնաբաժնի փոփոխված (ավելացված, նվազեցված) մեծությունը` հազար դրամներով: Նոր ստեղծվող ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալի ձևավորման դեպքում սույն հաշվետվությունն ներկայացնելիս սույն սյունակը չի լրացվում:

9) **«Մասնաբաժնի մեծությունը»** սյունակում լրացվում է կանոնադրական կապիտալում մասնակցի (բաժնետիրոջ) մասնակցության մեծությունը (հազար դրամներով): Ընդ որում, կանոնադրական կապիտալում փոփոխության դեպքում սույն հաշվետվությունը ներկայացնելիս այդ մեծությունը ներառում է նաև մասնակցի (բաժնետիրոջ) մասնաբաժնի փոփոխված մեծությունը:

10) **«Տեսակարար կշիռը կանոնադրական կապիտալում (%)»** սյունակում լրացվում է կանոնադրական կապիտալում մասնակցի (բաժնետիրոջ) մասնակցության մեծությունը` տոկոսային հարաբերությամբ: Ընդ որում, կանոնադրական կապիտալում փոփոխության դեպքում սույն հաշվետվությունը ներկայացնելիս այդ մեծությունը ներառում է նաև մասնակցի (բաժնետիրոջ) մասնաբաժնի փոփոխված տոկոսային մեծությունը:

11) **«Գործարքի բնույթը»** սյունակում կանոնադրական կապիտալի ձևավորման դեպքում նշվում է «կապիտալի ձևավորում», կանոնադրական կապիտալի համալրման դեպքում` «կապիտալի համալրում», նվազեցման դեպքում` «կապիտալի նվազեցում», այլ փոփոխությունների դեպքում «այլ փոփոխություն:

**(41-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

42. **(42-րդ կետը ուժը կորցրել է 05.05.09թ. թիվ 115 Ն որոշմամբ)**
43. **(43-րդ կետը ուժը կորցրել է 05.05.09թ. թիվ 115 Ն որոշմամբ)**
44. **(44-րդ կետը ուժը կորցրել է 05.05.09թ. թիվ 115 Ն որոշմամբ)**

45. (45-րդ կետը ուժը կորցրել է 05.05.09թ. թիվ 115 Ն որոշմամբ)

46. (46-րդ կետը ուժը կորցրել է 05.05.09թ. թիվ 115 Ն որոշմամբ):

## ԳԼՈՒԽ 5. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 5 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

47. Թիվ 5 հաշվետվությունում ներկայացվում են Կանոնակարգ 4/02-ով սահմանված նորմատիվային ընդհանուր կապիտալի նվազագույն չափի կազմի մեջ մտնող և պակասեցվող տարրերի մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում ու վերջում, և այդ տարրերի կրած փոփոխությունները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում: Ընդ որում՝ սույն հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով:

**(47-րդ կետը խմբ. 30.03.10թ. թիվ 55Ն)**

48. Բացասական փոփոխությունների դեպքում փոփոխված մեծության առջև դրվում է «-» նշան:

## ԳԼՈՒԽ 6. ԻՐ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻՆ (ԻՐ ՀԱՇՎԻՆ ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԻՑ) ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

49. Թիվ 6 հաշվետվությունում լրացվում են հաշվետվության ներկայացման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ից մինչև հաշվետվության ներկայացման օրվա ժամը 16:00-ը կնքված գործարքների և (կամ) արդեն կնքված գործարքների պայմաններում փոփոխությունների (այսուհետ՝ փոփոխված գործարքներ)) վերաբերյալ տեղեկությունները (անկախ տվյալ գործարքի մարման ժամկետից): Ընդ որում, սույն հաշվետվության իմաստով գործարքների պայմաններում փոփոխություններ են համարվում սույն հաշվետվության 2-ից 15-րդ սյունակներում տվյալ գործարքի վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկությունների փոփոխությունները: Փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները լրացնելիս սույն հաշվետվության սյունակներում լրացվում են ինչպես բոլոր փոփոխված տեղեկությունները (բացառությամբ «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը» սյունակների, որտեղ լրացվում են առաջնային գործարքի համապատասխանաբար «Գործարքի կնքման ամսաթիվը» և «Գործարքի նույնականացուցիչ համարը»), այնպես էլ այն տեղեկությունները, որոնք չեն փոփոխվել: Ընդ որում, սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, դոլարով և այլն), որով կնքվել են գործարքները:

**(49-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, խմբ. 07.12.10թ. թիվ 324Ն, փոխ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

49.1. Թիվ 6 հաշվետվությունը չի ներկայացվում մարման գործարքների համար:

**(49.1 կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

49.2. Թիվ 6 հաշվետվության համաձայն բոլոր թվերը կլորացվում են ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:

**(49.2 կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

49.3. **(49.3 կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն, ուժը կորցրել է 06.11.12թ. թիվ 298Ն)**

**50. (50-րդ կետը ուժը կորցրել է 05.05.09թ. թիվ 115 Ն որոշմամբ):**

51. Թիվ 6 հաշվետվությունը բաղկացած է 16 աղյուսակից: Թիվ 6 հաշվետվության համաձայն գործարքի կնքում է համարվում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից արժեթղթերի առքի կամ վաճառքի պայմանագրի կնքումը ֆոնդային բորսայում, այլ կարգավորվող շուկայում կամ չկարգավորվող շուկայում: Ընդ որում, տեղաբաշխման շրջանակում կնքված գործարքները (արժեթղթերի առաջին վաճառքը ներդրողներին) թիվ 6 հաշվետվությունում չեն արտացոլվում: Այդ գործարքները արտացոլվում են թիվ 9 հաշվետվությունում:

**(51-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն, փոխ. 07.12.10թ. թիվ 324Ն)**

51.1 Եթե արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում հիմնադիրների համախմբված դրամական միջոցներով կամ արժեթղթերով ներդրումային ծառայություններ մատուցող անձն իրականացնում է գործարքներ հիմնադիրներից յուրաքանչյուրի համար միևնույն պայմաններով և այդ գործարքների իրականացման արդյունքում մուտք եղած ակտիվները ներդրումային ծառայություններ մատուցող անձը բաշխում է գործարքի մասնակից հիմնադիրների հաշիվներում՝ համաձայն այդ հիմնադիրների հետ կնքված արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրում նշված կանոնների, ապա թիվ 6 հաշվետվությունում այդ գործարքները ներկայացվում են որպես մեկ՝ «իր անունից և հաճախորդի հաշվին» համախմբված գործարք, այլ ոչ թե բազմաթիվ գործարքներ՝ յուրաքանչյուր հիմնադրի համար առանձին: Եթե այդ գործարքների պարամետրերը ըստ հիմնադիրների տարբերվում են, ապա դրանք ներկայացվում են առանձին գործարքների տեսքով:»:

**(21.1-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

51.2 Թիվ 6 հաշվետվական ձևում ներառվում են նաև ներդրումային ծառայություններ մատուցող անձի հետ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագիր կնքած հիմնադիրների միջև և (կամ) հիմնադիրների և ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջև արժեթղթերով և դրամական միջոցներով առք ու վաճառքի գործարքները: Առաջին դեպքում ներդրումային ծառայություններ մատուցող անձի և հիմնադրի միջև կնքված արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի հիման վրա ընկերությունն իրականացնում է իր անունից և հաճախորդների հաշվին գործառնություններ, որոնց արդյունքում հիմնադիրների միջև տեղի է ունենում արժեթղթերի սեփականության իրավունքի փոխանցում, իսկ իր անունից և հիմնադիրների հաշվին գործող ընկերությունը հանդես է գալիս գործարքի և' գնորդ, և' վաճառող կողմ: Երկրորդ դեպքում գործարքների կնքման հիմք են հանդիսանում ներդրումային ծառայություններ մատուցող անձի և հիմնադրի՝ ի դեմս ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջև կնքված առք ու վաճառքի պայմանագիրը, որի հիման վրա ներդրումային ծառայություններ մատուցող անձն

իրականացնում է մի կողմից՝ իր անունից և իր հաշվին, մյուս կողմից՝ իր անունից և հաճախորդի հաշվին գործառնություններ:

**(51.2-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

52. Թիվ 6 հաշվետվության աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) **«Ում հաշվին է գործարքը կնքվել»** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի հաշվին կնքվել է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»:

1.1) **«Ում անունից է գործարքը կնքվել»** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի անունից կնքվել է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»: Հայաստանի Հանրապետության կառավարության (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության) կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների դեպքում ձեռքբերված պարտատոմսերի մասին տեղեկությունները լրացնելիս սույն սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որն անմիջականորեն Կենտրոնական բանկից ձեռք է բերել Հայաստանի Հանրապետության կառավարության (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության) կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերը:

2) «**Գործարքի կնքման ժամը»** սյունակում լրացվում է գործարքի կնքման ժամը միայն կարգավորվող շուկայում կնքված գործարքների համար: Օտարերկրյա կարգավորվող շուկաներում գործարքների կնքման դեպքում գործարքի կնքման ժամը նշվում է տեղի (Հայաստանի Հանրապետության) ժամանակով (հայտնի լինելու դեպքում): Ընդ որում, գործարքի կնքման ժամը նշվում է հետևյալ կերպ. ժամ:րոպե:վայրկյան Օրինակ՝ 13:50:55:
3) **«Արժեթղթի դասը»** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի (թողարկման պետական գրանցման համարի) առկայության դեպքում սույն ենթակետում նշված սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիր առկա, թե ոչ:
4) **«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):
5) **«Թողարկողի ֆիրմային անվանումը գտնվելու վայրը»** սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը,

ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն)՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

6) **«Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով»** սյունակում լրացվում է արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը

7) **«Գործարքի արժույթի ISO կոդը»** սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:

8) **«Արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը»** ոչ ծավալային ֆիքսված տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և(կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով (մեթոդաբանությամբ): Ոչ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում սույն սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային լողացող տոկոսադրույքով արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված ընթացիկ արժեկտրոնի զեղչման դրույքը (ընթացիկ արժեկտրոնը (առաջիկա վճարվելիք արժեկտրոնը) զեղչելու համար օգտագործվող շուկայական տոկոսադրույքը)՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և(կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով: Սույն սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում, արժեթղթի մինչև մարում եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կատարման (վերջնահաշվարկի) օրվա դրությամբ:

9) **«Գործարքի կնքման վայրը»** սյունակը լրացվում է հետևյալ կերպ. եթե գործարքը կնքվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում, ապա նշվում է կարգավորվող շուկայի օպերատորին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, եթե գործարքը կնքվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկայում՝ ապա նշվում է տվյալ օպերատորի լրիվ ֆիրմային անվանումը, եթե գործարքը կնքվել է կարգավորվող շուկայից դուրս՝ ապա նշվում է «չկարգավորվող շուկա»: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերով Կենտրոնական բանկի կողմից կազմակերպված աճուրդների ընթացքում կնքված գործարքների դեպքում սույն ենթակետում նշված սյունակում լրացվում է «այլ շուկա»:

10) **«Գործարքի մյուս կողմը»** սյունակում լրացվում է գործարքի մյուս կողմ հանդիսացող անձին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, դրա բացակայության դեպքում նշվում է այդ կողմի ռեզիդենտությունը՝ կատարելով «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ» նշումը: Ընդ

որում, եթե գործարքի մյուս կողմ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձը գործարքը կնքել է հաճախորդի հաշվին, ապա գործարքի մյուս կողմ է համարվում ոչ թե տվյալ հաճախորդը, այլ այդ հաճախորդի հաշվին գործարք կնքող ներդրումային ծառայություններ մատուցող անձը: «Հայաստանի Հանրապետության կառավարության (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության) կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների դեպքում ձեռքբերված պարտատոմսերի մասին տեղեկությունները լրացնելիս սույն սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողը՝ կախված թողարկողից: (ներառյալ՝ այն դեպքերում, երբ հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձը տվյալ պարտատոմսերը ձեռք է բերել այլ անձի միջոցով): Այն դեպքում, երբ գործարքի մյուս կողմը հայտնի չէ, մասնավորապես՝ կազմակերպված շուկաներում (բորսաներում, այլընտրանքային առևտրային համակարգերում և այլ նմանատիպ շուկաներում) կնքված գործարքների դեպքում, սույն սյունակում լրացվում է «կազմակերպված շուկա» (բացառությամբ այս շուկաներում կնքված հասցեական գործարքների):

11) **«Գործարքի նույնականացուցիչ համարը»** սյունակում նշվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից վարվող գործարքների ներքին գրանցամատյաններում տվյալ գործարքին տրված նույնականացուցիչ համարը, որը պետք է լինի առանձնահատուկ (չկրկնվող) յուրաքանչյուր գործարքի համար:
12) **«Գործարքի կնքման ամսաթիվը»** սյունակում լրացվում է առաջնային գործարքի կնքման ամսաթիվը:
13) **«Փոփոխված գործարքի ամսաթիվը»** սյունակը լրացվում է միայն փոփոխված գործարքների լրացման դեպքում, որտեղ լրացվում է նախկինում կնքված գործարքի պայմաններում փոփոխություն իրականացնելու մասին ցանկացած ձևով համաձայնություն ձեռքբերելու ամսաթիվը՝ անկախ այդ համաձայնության ուժի մեջ մտնելու ժամկետից:
14) **«Գործարքի բնույթը»** սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված», «կրճատված» կամ «այլ»: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է «նոր կնքված», արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «կրճատված», երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «երկարաձգված», իսկ արդեն կնքված գործարքների այլ պայմանների փոփոխության դեպքում, որոնց դեպքում գործարքի գործողության ժամկետի փոփոխություն տեղի չի ունեցել, նշվում է «այլ»:
15) **«Միջնորդը»** սյունակը լրացման է ենթակա միայն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով օտարերկրյա կազմակերպված շուկայում կամ օտարերկրյա անձի հետ գործարքներ կնքելու դեպքում, որտեղ լրացվում է միջնորդ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը:

**(52-րդ կետը խմբ., լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, խմբ. 30.03.10թ. թիվ 55Ն, փոխ., լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն, փոխ. 06.11.12թ. թիվ 298Ն, փոխ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

52.1 Ի լրումն սույն կանոնակարգի 52-րդ կետով սահմանված լրացման կանոնների՝ Թիվ 6 հաշվետվության յուրաքանչյուր աղյուսակի համար սույն կանոնակարգի 53-71.4-րդ կետերով նախատեսվում են լրացման լրացուցիչ կանոններ:

**(52.1-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

53. *Թիվ 6 հաշվետվության 1-ին աղյուսակում* լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից բաժնային և /կամ/ ոչ բաժնային արժեթղթերով առուվաճառքի, ինչպես նաև հասցեական գործարքների վերաբերյալ տեղեկությունները.

**(53-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

54. Թիվ 6 հաշվետվության 1-ին աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Գործարքի տեսակը (առք/վաճառք)»** սյունակում լրացվում է «առք» կամ «վաճառք»՝ կախված հաշվետվություն ներկայացնող ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից գործարքը առք է, թե՝ վաճառք:»:
2) **«Քանակը»** սյունակում լրացվում է գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը՝ հատերով, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
3) **«Միավոր արժեթղթի գինը»** սյունակում լրացվում է մեկ արժեթղթի առքի (վաճառքի) գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
4) **«Ընդհանուր գումարը»** հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:
5) «**Գործարքի կատարման ամսաթիվը**» սյունակում լրացվում է արժեթղթերի առուվաճառքի գործարքի վերջնահաշվարկի ամսաթիվը (օրինակ, 01/01/2015):

**(54-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

55. *Թիվ 6 հաշվետվության 2-րդ աղյուսակում* լրացվում են հաշվետու օրվան նախորդող օրվա ժամը 16:00-ից մինչև հաշվետու օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված, և (կամ) փոփոխված գործարքների վերաբերյալ տեղեկությունները: Սույն աղյուսակում անհրաժեշտ է լրացնել բոլոր ռեպո/հակադարձ ռեպո գործարքները (այդ թվում՝ լոմբարդային ռեպո գործարքները), բացառությամբ միջօրյա ռեպո գործարքների: Այն դեպքում, երբ միջօրյա ռեպո գործարքը վերաձևակերպվում է լոմբարդային ռեպո գործարքի, ապա այդ գործարքն անհրաժեշտ է ներառել սույն աղյուսակում, ընդ որում՝ այս դեպքում տվյալ գործարքը ներառվում է հաջորդ հաշվետու օրվա հաշվետվության մեջ: Այն դեպքերում, երբ կնքված ռեպո/հակադարձ ռեպո գործարքների՝ հաշվետվության մեջ ներառման ենթակա

տվյալները հայտնի չեն մինչև գործարքի կնքման օրվա ժամը 16:30-ը, ապա նշված գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են հաջորդ հաշվետու օրվա հաշվետության մեջ:

**(55-րդ կետը լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, փոխ. 07.12.10թ. թիվ 324Ն, փոխ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

56. Թիվ 6 հաշվետվության 2-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Գործարքի տեսակը ռեպո/հակադարձ ռեպո»** սյունակում նշվում է հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի տեսանկյունից յուրաքանչյուր տողով արտացոլվող գործարքը ռեպո է, թե հակադարձ ռեպո: Արժեթղթերի վաճառքի գործարքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես «ռեպո» գործարք, իսկ արժեթղթերի առքի գործարքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես «հակադարձ ռեպո» գործարք:

1.1) **(1.1. ենթակետը ուժը կորցրել է 07.12.10թ. թիվ 324 Ն որոշմամբ):**

**1.2) «Գործարքի կատարման ամսաթիվը»** սյունակում լրացվում է ռեպո/հակադարձ ռեպո գործարքի (առաջնային առքի/վաճառքի) վերջնահաշվարկի ամսաթիվը (օրինակ, 01/01/2015):

**(1.2. ենթակետը լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

2) **(2-րդ ենթակետը ուժը կորցրել է 07.12.10թ. թիվ 324 Ն որոշմամբ):**

3) **(3-րդ ենթակետը ուժը կորցրել է 07.12.10թ. թիվ 324 Ն որոշմամբ):**

**3.1) «Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):
**(3.1. կետը լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

4) **«Քանակը»** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի հիմքում ընկած արժեթղթի քանակը: Ընդ որում՝ ծավալային արժեթղթերով ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների կնքման դեպքում սույն սյունակը չի լրացվում:
5) **«Ընդհանուր գումարը»** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային առքի (վաճառքի) ընդհանուր արժեքը:
6) **«Տարեկան ռեպո (հակադարձ ռեպո) տոկոսադրույքը»** սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր) տոկոսադրույքը: Այն դեպքում, երբ տոկոսադրույք վճարողը արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:

6.1) **«Ռեպո/հ. ռեպո գործարքի մարման ամսաթիվը»** սյունակում լրացվում է

ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման վերջնաժամկետը (մասնավորապես՝ 01/01/2015):

**(56-րդ կետը փոխ., լրաց., խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, փոխ. 07.12.10թ. թիվ 324Ն, 06.11.12թ. թիվ 298Ն, լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

56.1. Այն դեպքում, երբ ռեպո/հակադարձ ռեպո գործարքի հիմքում ընկած են մի քանի տեսակի արժեթղթեր (մեկից ավելի ծածկագիր ունեցող արժեթղթեր), այդ գործարքները յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համար լրացվում են առանձին տողով: Ընդ որում՝ «Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով», «Քանակը» և «Ընդհանուր գումարը» սյունակներում լրացվում են յուրաքանչյուր ծածկագրով արժեթղթի համապատասխանաբար ընդհանուր անվանական արժեքը, քանակը (առկայության դեպքում) և յուրաքանչյուր արժեթղթի դիմաց ստացվող/տրամադրվող դրամական միջոցների ընդհանուր արժեքը:

**(56.1-րդ կետը լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

57. **(57-րդ կետը լրաց. 08.09.09թ. թիվ 272Ն, լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, ուժը կորցրել է 07.12.10թ. թիվ 324Ն)**

~~58.~~ **(58-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, ուժը կորցրել է 07.12.10թ. թիվ 324Ն)**

59. *Թիվ 6 հաշվետվության 4-րդ աղյուսակում* լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժութային ֆորվարդ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

**(59 կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

60. Թիվ 6 հաշվետվության 4-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Գործարքի տեսակը (Ֆորվարդ առք/Ֆորվարդ վաճառք)»** սյունակում նշվում է « ֆորվարդ առք» կամ «ֆորվարդ վաճառք»՝ կախված նրանից, թե հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆորվարդի հիմքում ընկած արժույթը կամ սակարկվող արժույթը (այսուհետ՝ ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած արժույթ) գնվում, թե վաճառվում է:
2) **«Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը»** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթի կամ սակարկվող արժույթի (այսուհետ՝ ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթ) ISO կոդը:
3) **«Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը»** սյունակում լրացվում է գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

**(60-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

60.1.Սույն կանոնակարգի համաձայն Ֆորվարդի հիմքում ընկած արժույթն անհրաժեշտ է որոշել հետևյալ սկզբունքով.

1) եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը հայկական դրամ

է, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արժույթը, որի դիմաց տրամադրվում է հայկական դրամը,

2) եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը ԱՄՆ դոլար է, իսկ մյուսը՝ հայկական դրամից տարբեր արտարժույթ, ապա ԱՄՆ դոլարն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,

3) եթե ֆորվարդով փոխանակվող արժույթներից մեկը եվրո է, իսկ մյուսը՝ հայկական դրամից և ԱՄՆ դոլարից տարբեր արտարժույթ, ապա եվրոն է համարվում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ,

4) եթե ֆորվարդով փոխանակվում են հայկական դրամից, ԱՄՆ դոլարից, եվրոյից տարբեր արժույթներ, ապա ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում այն արտարժույթը, որի՝ ֆորվարդ պայմանագրով համաձայնեցված ծավալի հարաբերությունը մյուս արտարժույթի՝ ֆորվարդով համաձայնեցված ծավալին ստացվում է 1-ից մեծ:

Ենթադրենք ներդրումային ծառայություններ մատուցող անձը ֆորվարդ պայմանագրի համաձայն պայմանագրում նշված ժամկետում պետք է տրամադրի հակառակ կողմին որոշակի ծավալով ԱՄՆ դոլար՝ հակառակ կողմից ստանալով որոշակի ծավալով հայկական դրամ, ապա այս դեպքում ֆորվարդի հիմքում ընկած արժույթ է համարվում ԱՄՆ դոլարը, իսկ հայկական դրամը համապատասխանաբար՝ ստացվելիք արժույթ և հաշվետվության 8-րդ՝ (Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը) սյունակում նշվում է «AMD»:

**(60.1-րդ կետը լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն)**

61. *Թիվ 6 հաշվետվության 5-րդ աղյուսակում* լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժութային ֆյուչերս գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

**(61 կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

62. Թիվ 6 հաշվետվության 5-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Գործարքի տեսակը (ֆյուչերս առք/ֆյուչերս վաճառք)»** սյունակում նշվում է «ֆյուչերս առք» կամ «ֆյուչերս վաճառք»՝ կախված նրանից թե հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆյուչերսի հիմքում ընկած արժույթը կամ սակարկվող արժույթը (այսուհետ՝ ֆյուչերս պայմանագրի հիմքում ընկած արժույթ) գնվում, թե վաճառվում է:

2) **«Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը»** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆյուչերս պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթի կամ սակարկվող արժույթի (այսուհետ՝ ֆյուչերս պայմանագրի հիմքում ընկած արժույթի դիմաց ստացվող կամ վճարվող արժույթ) ISO կոդը:

3) **«Ֆյուչերսի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը»** սյունակում լրացվում է գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

62.1. Սույն կանոնակարգի համաձայն ֆյուչերսի հիմքում ընկած արժույթն անհրաժեշտ է որոշել 60.1.-րդ կետում սահմանված սկզբունքով:

**(62.1-րդ կետը լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն)**

63. *Թիվ 6 հաշվետվության 6-րդ աղյուսակում* լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժեթղթերով ֆորվարդ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

**(63 կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

64. Թիվ 6 հաշվետվության 6-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Գործարքի տեսակը (Ֆորվարդ առք/Ֆորվարդ վաճառք)»** սյունակում նշվում է « ֆորվարդ առք» կամ «ֆորվարդ վաճառք»՝ կախված նրանից, թե ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆորվարդի հիմքում ընկած արժեթուղթը գնվում, թե վաճառվում է:
2) **«Միավոր արժեթղթի գինը**» սյունակում նշվում է ֆորվարդի հիմքում ընկած մեկ արժեթղթի ձեռքբերման կամ վաճառքի /իրականացման/ գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
3) **«Քանակը»** սյունակում լրացվում է ֆորվարդ պայմանագրի հիմքում ընկած՝ գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը, ընդ որում, ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
4) **«Ընդհանուր գումարը»** հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:
5) **«Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը»** սյունակում լրացվում է գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

**(64-րդ կետը փոխ. 06.11.12թ. թիվ 298Ն)**

65. *Թիվ 6 հաշվետվության 7-րդ աղյուսակում* լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժեթղթերով ֆյուչերս գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

**(65 կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

66. Թիվ 6 հաշվետվության 7-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Գործարքի տեսակը (ֆյուչերս առք/ֆյուչերս վաճառք)»** սյունակում նշվում է «ֆյուչերս առք» կամ «ֆյուչերս վաճառք»՝ կախված նրանից թե հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից ֆյուչերսի հիմքում ընկած արժեթուղթը գնվում, թե վաճառվում է:
2) **«Մեկ ֆյուչերսի հիմքում ընկած արժեթղթերի քանակը»** սյունակում լրացվում է մեկ ֆյուչերսի հիմքում ընկած՝ գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը, ընդ որում՝ ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
3) **«Միավոր արժեթղթի գինը**» սյունակում նշվում է ֆյուչերսի հիմքում ընկած մեկ արժեթղթի ձեռքբերման կամ վաճառքի /իրականացման/ գինը: Ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
4) **«Ընդհանուր գումարը»** հաշվարկվում է որպես միավոր գնի և քանակի արտադրյալ: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:
5) **«Ֆյուչերսի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը»** սյունակում լրացվում է գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

67. *Թիվ 6 հաշվետվության 8-րդ և 9-րդ աղյուսակներում* լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից այլ ակտիվներով (բացառությամբ արժույթի և արժեթղթերի) կնքված ֆորվարդ և ֆյուչերս գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները: 8-րդ և 9-րդ աղյուսակները լրացվում են համապատասխանաբար սույն կանոնակարգի 64-րդ և 66-րդ կետերով սահմանված արժեթղթերով ֆորվարդների և արժեթղթերով ֆյուչերսների լրացման հրահանգին համապատասխան: Ընդ որում՝ **«ֆորվարդի հիմքում ընկած ակտիվը»** կամ **«ֆյուչերսի հիմքում ընկած ակտիվը»** սյունակներում լրացվում է դրանց հիմքում ընկած ցանկացած ակտիվի անվանումը:

**(67 կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

68. *Թիվ 6 հաշվետվության 10-րդ, 11-րդ և 12-րդ աղյուսակում* լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված արժութային, արժեթղթերով և այլ ակտիվներով (բացառությամբ արժույթի, արժեթղթերի) օպցիոն գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) առքի և վաճառքի գործարքների վերաբերյալ տեղեկությունները.

**(68 կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն)**

69. Թիվ 6 հաշվետվության 10-րդ, 11-րդ և 12-րդ աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Գործարքի տեսակը (օպցիոն առք/օպցիոն վաճառք)»** սյունակում լրացվում է «օպցիոն առք» կամ «օպցիոն վաճառք»՝ կախված, թե հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից օպցիոնի առք է, թե վաճառք: Ներդրումային ծառայություններ մատուցող անձի տեսանկյունից *օպցիոնի առք* է համարվում իրավունքի ձեռք բերումը գնել (վաճառել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը, որի դիմաց ներդրումային ծառայություններ մատուցող անձը հակառակ կողմին (որը ստանձնում է պարտավորություն վաճառել (գնել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը) վճարում է պարգևավճար: *Եվ օպցիոնի վաճառք* է համարվում պարտավորության ստանձնումը գնել (վաճառել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը, որի դիմաց հակառակ կողմը (որը ձեռք է բերում իրավունք վաճառել (գնել) օպցիոնի հիմքում ընկած ակտիվը) ներդրումային ծառայություններ մատուցող անձին վճարում է պարգևավճար:
2) **«Օպցիոնի տեսակը (գնման օպցիոն/ վաճառքի օպցիոն)»** սյունակում լրացվում է «գնման օպցիոն» կամ «վաճառքի օպցիոն»: Գնման օպցիոնի առք նշանակում է, որ գնման օպցիոնի գնորդը իրավունք է ձեռք բերում գնել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Գնման օպցիոնի վաճառք նշանակում է, որ գնման օպցիոնի վաճառողը պարտավորություն է ստանձնում վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Վաճառքի օպցիոնի առք նշանակում է, որ վաճառքի օպցիոնի գնորդը իրավունք է ձեռք բերում վաճառել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Վաճառքի օպցիոնի վաճառք նշանակում է, որ վաճառքի օպցիոնի վաճառողը պարտավորություն է ստանձնում գնել օպցիոնի հիմքում ընկած ակտիվը: Մի կողմի համար գնման օպցիոնի առքը մյուս կողմի համար նշանակում է գնման օպցիոնի վաճառք: Մի կողմի համար վաճառքի օպցիոնի առքը մյուս կողմի համար նշանակում է վաճառքի օպցիոնի վաճառք:
3) **«Միավոր արժեթղթի գինը»**, **«Քանակը»**, **«Ընդհանուր գումարը (ծավալը)»** սյունակները լրացվում են սույն կանոնակարգի 60-րդ և 64-րդ կետով սահմանված արժույթով և արժեթղթերով ֆորվարդների լրացման հրահանգին

համապատասխան՝ կախված օպցիոնի հիմքում ընկած ակտիվից (այլ ակտիվներով օպցիոնների դեպքում աղյուսակի՝ վերոնշյալ սյունակները լրացվում են 64-րդ կետով սահմանված արժեքըթերով ֆորվարդների լրացման հրահանգին համապատասխան ):

**70.** *Թիվ 6 հաշվետվության 13-րդ, 14-րդ և 15-րդ աղյուսակներում* լրացվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված փոխարժեքային, արժութային և տոկոսադրույքային սվոփ գործարքների (այդ թվում՝ փոփոխված գործարքների) վերաբերյալ տեղեկությունները:

**(70-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն, փոխ. 07.12.10թ. թիվ 324Ն)**

71. Թիվ 6 հաշվետվության 13-րդ, 14-րդ և 15-րդ աղյուսակների սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Վճարվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):
2) **«Ստացվող տոկոսադրույքի վճարման պարբերականությունը»** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձին վճարվող տոկոսադրույքի պարբերականությունը (մասնավորապես՝ օրական, շաբաթական, ամսական, տարեկան և այլն):
3) **«Գործարքի տեսակը (ներգրավման սվոփ / տրամադրման սվոփ)»** սյունակում սվոփի հիմքում ընկած արժույթի ներգրավման դեպքում լրացվում է «ներգրավման սվոփ», իսկ սվոփի հիմքում ընկած արժույթի տրամադրման դեպքում՝ «տրամադրման սվոփ:
4) **«Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»** սյունակի **«Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը»** ենթասյունակում լրացվում է սփոթ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ **«Գործարքի արժույթի ընդհանուր ծավալը»** ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով):
5) **«Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալը»** սյունակի **«Սվոփի հիմքում ընկած արժույթի ծավալը»** ենթասյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի ընթացքում սվոփի հիմքում ընկած արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված սվոփի հիմքում ընկած արժույթով), իսկ **«Գործարքի արժույթի ընդհանուր ծավալը»** ենթասյունակում՝ սվոփի հիմքում ընկած արժույթի դիմաց տրամադրվող (ստացվող) արժույթի ընդհանուր գումարը (արտահայտված գործարքի արժույթով): Ընդ որում՝ փոխանակվող արժույթների ծավալն իր մեջ չի ներառում ներգրավված/տրամադրված արժույթների դիմաց վճարվող/ստացվող տոկոսագումարները (արժութային սվոփի դեպքում):
6) **«Սփոթ գործարքի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»** սյունակում լրացվում է սփոթ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:
7) **«Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվ»** սյունակում լրացվում է ֆորվարդ գործարքի փաստացի իրականացման ամսաթիվը:

Ընդ որում՝ Թիվ 6 հաշվետվության 13, 14 աղյուսակների սվոպի (սվոպ գործարքի) հիմքում ընկած արժույթը որոշվում է 60.1-րդ կետում սահմանված

սկզբունքով: 60.1-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով սվոփի հիմքում ընկած արժույթը որոշելիս երկու արժույթների ծավալների հարաբերության որոշման համար հիմք է ընդունվում սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների ծավալները:Թիվ 6 հաշվետվության աղյուսակ 15-ի համաձայն սվոպի հիմքում ընկած արժույթը տոկոսային վճարումների հաշվարկման համար հիմք հանդիսացող դրամական միջոցների արժույթն է:

**(71-րդ կետը լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն, լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

71.1 *Թիվ 6 հաշվետվության 16-րդ աղյուսակում* լրացվում է 49-րդ կետում սահմանված ժամկետներում ինչպես կնքված (վերակնքված) և (կամ) կատարված (փակված) փոխարժեքային տարբերության վրա հիմնված գործարքների վերաբերյալ տեղեկությունները: «Փոխարժեքային տարբերության վրա հիմնված գործարքը» համաձայնություն է երկու կողմերի միջև որոշակի պարբերականությամբ միմյանց միջև փոխանակել ակտիվի փոխարժեքային տարբերությունները գործարքի կնքման և փակման միջակայքում: Ընդ որում, գործարքի կնքման պահին նախապես չի սահմանվում գործարքի փակման ժամկետը: Ընդ որում.

1) Կնքված է համարվում նոր կնքված գործարքը (նոր բացված դիրքը),

2) Վերակնքված է համարվում նախկինում կնքված գործարքի վերակնքման գործարքը,

3) Կատարված գործարք է համարվում կնքված (վերակնքված) գործարքի դիրքերի վերագնահատումը՝ փաստացի (կատարման) փոխարժեքով,

4) Փակված գործարք է համարվում կնքված (վերակնքված) գործարքի դիրքերի վերջնական փակումը:

**(71.1-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

71.2 *Թիվ 6 հաշվետվության 16-րդ աղյուսակի* սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Գնվող/վաճառվող արժույթի ISO կոդը»** սյունակում լրացվում է գործարքի կնքման (վերակնքման) պահին գնվող, կատարման (փակման) պահին վաճառվող արժույթի ISO կոդը:
2) **«Գործարքի արժույթի ISO կոդը»** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով գնվում/վաճառվում է կնքման (վերակնքման), կատարման (փակման) գործարքների առարկա հանդիսացող արժույթը:
3) **«Բացման փոխարժեքը»** սյունակում լրացվում է արտարժութային գործարքի կնքման (վերակնքման) պահին գնվող (գնված) միավոր արժույթի ձեռքբերման փոխարժեքը:
4) **«Կատարման փոխարժեքը»** սյունակում լրացվում է գործարքի կատարման պահին գնված արժույթի փաստացի փոխարժեքը (վերակնքման դեպքում) կամ դիրքի փակման պահին վաճառվող (նախկինում գնված) արժույթի փաստացի փոխարժեքը (գործարքի վերջնական փակման դեպքում):
5) **«Շահույթ/վնաս»** սյունակում լրացվում է տվյալ գործարքի արդյունքում առաջացած շահույթը/վնասը գործարքի արժույթով:

6) **«Գործարքի կնքման (վերակնքման) ամսաթիվը»** սյունակում առաջին անգամ կնքված գործարքների դեպքում լրացվում է գործարքի կնքման ամսաթիվը, մնացած դեպքերում՝ գործարքի վերակնքման ամսաթիվը:
*7)* **«Գործարքի բնույթը»** սյունակում լրացվում է «կնքված», «վերակնքված», «կատարված» կամ «փակված»՝ կախված սույն կանոնակարգի 71.1-րդ կետով սահմանված դրույթների համաձայն որոշված գործարքի բնույթից:

**(71.2-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

*71.3 Թիվ 6 հաշվետվության 17-րդ աղյուսակում* լրացվում է 49-րդ կետում սահմանված ժամկետներում կնքված, և (կամ) փակված գնային տարբերության վրա հիմնված գործարքների վերաբերյալ տեղեկությունները: «Գնային տարբերության վրա հիմնված գործարքը» համաձայնություն է երկու կողմերի միջև՝ որոշակի պարբերականությամբ միմյանց միջև փոխանակել ակտիվի գնային տարբերությունները: Ընդ որում, գործարքի կնքման պահին նախապես չի սահմանվում գործարքի փակման ժամկետը: Ընդ որում.

1) Կնքված է համարվում նոր կնքված գործարքը (ակտիվի ձեռքբերումը),

2) Փակված գործարք է համարվում նախկինում կնքված գործարքի արդյունքում ձեռքբերված ակտիվի վաճառքը:

**(71.3-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

71.4 *Թիվ 6 հաշվետվության 17-րդ աղյուսակի* սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Գործարքի առարկա ակտիվի ձեռքբերման (բացման) գինը»** սյունակում լրացվում է գործարքի կնքման պահին ակտիվի ձեռքբերման գինը:
2) **«Գործարքի առարկա հանդիսացող ակտիվի վաճառքի (փակման) գինը»** սյունակում լրացվում է գործարքի վերջնական կատարման (ակտիվի վաճառքի) փաստացի գինը: Սույն սյունակը գնային տարբերության վրա հիմնված գործարքների կնքման դեպքում չի լրացվում:
3) **«Շահույթ/վնաս»** սյունակում լրացվում է տվյալ գործարքի արդյունքում առաջացած շահույթը/վնասը՝ բացման գնի արժույթով:

**4. «Գործարքի բնույթը»** սունակում լրացվում է «կնքված» կամ «փակված»՝ կախված սույն կանոնակարգի 71.3-րդ կետով սահմանված դրույթների համաձայն որոշված գործարքի բնույթից:

**(71.4-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն)**

## ԳԼՈՒԽ 7. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 7 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

72. Թիվ 7 հաշվետվությունում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման վերցված միջոցները: Ընդ որում՝ սույն հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով:

**(72-րդ կետը լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն)**

73. **«Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ միջոցների ընթացիկ արժեքը»** սյունակում լրացվում է ակտիվի վերաչափված հաշվեկշռային արժեքը, իսկ դրամական միջոցների դեպքում՝ արտարժույթի փոխարժեքը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված միջին փոխարժեքով:

**(73-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

## ԳԼՈՒԽ 8. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 8 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

74. Թիվ 8 հաշվետվությունում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի արժեթղթերի փաթեթի կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների տեսանկյունից սույն հաշվետվական ձևում արտացոլվում են ինչպես հակադարձ ռեպո գործարքի արդյունքում սեփականության իրավունքով ձեռք բերված և դեռևս հետ չվաճառված արժեթղթերի, այնպես էլ ռեպո գործարքի արդյունքում վաճառված և դեռևս հետ չգնված արժեթղթերի մասին տեղեկությունները: Ընդ որում՝ սույն հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով: Թիվ 8 հաշվետվությունում տվյալները լրացվում են ամփոփ, այլ ոչ թե ըստ յուրաքանչյուր գործարքի:

**(74-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, խմբ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

75. Թիվ 8 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

2) **«Արժեթղթի դասը»** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի (պետական գրանցման համարի) առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակը

օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

3) **«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»** սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն)՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը առկա է, թե ոչ:

4) **«Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով»** սյունակում լրացվում է արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը: Ընդ որում, սույն սյունակը լրացվում է այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, դոլարով և այլն)՝ հազարներով, որով արտահայտված է տվյալ արժեթղթի անվանական արժեքը:

4.1) «Արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված է տվյալ արժեթղթի անվանական արժեքը:

5) **«Արժեթղթի քանակը»** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթի քանակը: Սույն սյունակը ծավալային արժեթղթերի համար չի լրացվում:

6) **«Արժեթղթի հաշվեկռային արժեքը»** սյունակում լրացվում է արժեթղթի հաշվեկշռային (հակադարձ ռեպո գործարքի արդյունքում ձեռքբերված արժեթղթերի դեպքում հետհաշվեկշռային) արժեքը, ներառյալ՝ այդ արժեթղթերի գծով հաշվարկված տոկոսները: Ընդ որում՝ սույն սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ հազարներով:

7) **«Արժեթղթի դասակարգումն ըստ ձեռքբերման նպատակի»** սյունակում լրացվում է «վաճառքի համար մատչելի», «մինչև մարման ժամկետը պահվող» կամ «շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող «կամ այլ» (նշված 3 դասակարգումներին չհամապատասխանելու դեպքում)»:

**8) «Արժեթղթի կարգավիճակը»** սյունակում լրացվում է «գրավադրված», եթե արժեթղթի տնօրինման իրավունքը որևէ ձևով սահմանափակված է, հակադարձ ռեպո գործարքի արդյունքում սեփականության իրավունքով ձեռք բերված և դեռևս հետ չվաճառված արժեթղթերի դեպքում լրացվում է «հակադարձ ռեպո», «հակադարձ ռեպո գործարքի արդյունքում ձեռք բերված արժեթղթերի տնօրինման իրավունքի՝ տվյալ գործարքի կնքումից հետո որևէ ձևով սահմանափակման դեպքում՝ «գրավադրված և հակադարձ ռեպո», ռեպո գործարքի արդյունքում վաճառված և դեռևս հետ չգնված արժեթղթերի դեպքում՝ «ռեպո», մնացած դեպքերում՝ «ազատ»:

**(75-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, խմբ., լրաց. 30.0310թ. թիվ 55Ն, լրաց. 06.11.12թ. թիվ 298Ն, փոխ., լրաց. 27.11.12թ. թիվ 330Ն, փոխ., լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

## ԳԼՈՒԽ 9. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 9 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

76. Թիվ 9 հաշվետվությունում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից տեղաբաշխված արժեթղթերի (բացառությամբ իր կողմից թողարկված արժեթղթերի) վերաբերյալ տեղեկությունները: Սույն հաշվետվությունը ներկայացնում է այն ներդրումային ծառայություններ մատուցող անձը, որը տվյալ արժեթղթերի գլխավոր տեղաբաշխողն է համարվում (ենթատեղաբաշխողների տեղաբաշխած արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է գլխավոր տեղաբաշխողը): Ընդ որում, սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, դոլարով և այլն)՝ հազարներով, որով տեղաբաշխվել են տվյալ արժեթղթերը:

**(76-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, խմբ. 06.11.12թ. թիվ 298Ն)**

77. Թիվ 9 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Տեղաբաշխողի կոդը»** սյունակում լրացվում է Կենտրոնական բանկի կողմից տեղաբաշխողին և (կամ) ենթատեղաբաշխողին տրամադրված կոդը:

2) **«Արժեթղթի դասը»** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե ոչ:

**3) «Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Պետական արժեթղթերի դեպքում, եթե բացակայում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, ապա նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

4) **«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»** սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի ) հասցեն)՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր

լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեքրթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե ոչ:»

5) **«Թողարկողի հետ կնքված պայմանագրի ամսաթիվը»** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղաբաշխված արժեթղթերի գծով թողարկողի հետ կնքված տեղաբաշխման պայմանագրի կնքման ամսաթիվը: Եթե տեղաբաշխման պայմանագիրը փոփոխվել է, ապա լրացվում է պայմանագրի փոփոխված ամսաթիվը: Սույն սյունակը լրացվում է անկախ այն հանգամանքից հաշվետու ժամանակաշրջանում արժեթղթեր տեղաբաշխվել են, թե ոչ:

6) **«Եղանակը (երաշխավորված (չերաշխավորված)»** սյունակում լրացվում է «երաշխավորված» և (կամ) «չերաշխավորված»: Ընդ որում, արժեթղթի տեղաբաշխման մասին տեղեկությունները լրացվում են երկու տողով, եթե պայմանագրով նախատեսված տեղաբաշխման ենթակա արժեթղթերի մի մասը նախատեսվում է իրականացնել երաշխավորված տարբերակով, իսկ մյուս մասը՝ չերաշխավորված:

7) «Արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով տեղաբաշխվել են տվյալ արժեթղթերը:

**(77-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 06.11.12թ. թիվ 298Ն, լրաց. 06.11.12թ. թիվ 298Ն, փոխ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

## ԳԼՈՒԽ 10. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 10 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ (վերնագիրը լրաց. 05.05.09թ. թիվ 115 Ն)

78. Թիվ 10 հաշվետվությունում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից պահառության վերցված ոչ պետական արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու ամսվա) վերջի դրությամբ:

**(78-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն)**

79. Թիվ 10 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) «**Հաշվի տեսակը**» սյունակում լրացվում է «սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ» կամ «անվանատիրոջ հաշիվ»: Այն դեպքում, երբ միևնույն հաշվի սեփականատեր են համարվում մեկից ավելի սեփականատեր, նշվում է «սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ»:

2) **«Հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը»** սյունակում լրացվում է «իրավաբանական անձ» կամ «ֆիզիկական անձ»:

3) **«Հաշվետիրոջ ռեզիդենտությունը»** սյունակում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»՝ կախված նրանից, թե արժեթղթերի հաշվի սեփականատերը կամ անվանատերը ռեզիդենտ է, թե ոչ ռեզիդենտ:

4) **«Արժեթղթի դասը»** սյունակում լրացվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե ոչ:

5) **«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված կարգով շնորհված արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (համարանիշը): Ծածկագիր չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):

6) **«Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը»** սյունակում նշվում է թողարկողի ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը), գտնվելու վայրը (մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն)՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագրի բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե ոչ:

7) **«Քանակը»** սյունակում լրացվում է տվյալ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում գրանցված արժեթղթերի ընդհանուր քանակը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի դասի)՝ հատերով, այդ թվում՝ գրավադրված և սառեցված արժեթղթերի քանակը: Սույն սյունակը ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում:

8) **«Ծավալը»** սյունակում լրացվում է սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը, այդ թվում՝ գրավադրված և սառեցված արժեթղթերի անվանական արժեքը (առկայության դեպքում):

9) **«Գրավադրված արժեթղթեր»** սյունակի **«քանակը»** կամ **«ծավալը»** ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա գրավադրված արժեթղթերի համապատասխանաբար ընդհանուր քանակը՝ հատերով կամ ընդհանուր անվանական արժեքը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի ծածկագրի), իսկ «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի քանակը» կամ «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ծավալը» ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա միայն այն գրավադրված արժեթղթերի համապատասխանաբար ընդհանուր քանակը կամ ընդհանուր անվանական արժեքը, որոնց նկատմամբ կիրառվել է ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում: Ընդ որում՝ տարբեր հիմքերով գրավադրված միևնույն արժեթղթերը համարվում են գրավադրված միայն մեկ անգամ: Ընդ որում՝ «քանակը», «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի քանակը» և «այդ թվում՝ քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի քանակը» ենթասյունակները չի լրացվում ծավալային արժեթղթերի դեպքում:

10) **«Արգելադրված արժեթղթեր»** սյունակի **«քանակը»** կամ **«ծավալը»** ենթասյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա այն արժեթղթերի համապատասխանաբար քանակը՝ հատերով կամ ծավալը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի ծածկագրի), որոնցով գործառնությունների իրականացման վրա արգելք (սահմանափակում) է դրվել (բացառությամբ գրավադրման հիմքով արգելանքի): Ընդ որում՝ տարբեր հիմքերով արգելադրված միևնույն արժեթղթերը

համարվում են արգելադրված միայն մեկ անգամ: Ընդ որում՝ «քանակը» ենթասյունակը չի լրացվում ծավալային արժեթղթերի դեպքում:

**(79-րդ կետը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 06.11.12թ. թիվ 298Ն, խմբ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

79.1 Այն դեպքում, երբ հաշվի տեսակը, հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը, հաշվետիրոջ ռեզիդենտությունը, արժեթղթի դասը, արժեթղթի ծածկագիրը, թողարկողի ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը միաժամանակ համընկնում են, ապա Ձիվ 10 հաշվետվությունը լրացնելիս տեղեկությունները լրացվում են ամփոփ՝մեկ տողով:
**(79.1 կետը լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

## ԳԼՈՒԽ 11. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 11 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

80. Թիվ 11 հաշվետվությունում լրացվում են ներդրումային ընկերությունների կողմից արտարժույթի առքի ու վաճառքի *սփոթ* գործարքների վերաբերյալ տեղեկությունները:

81. Եթե սույն հաշվետվությունում ներառվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, կամ եթե հաշվետվությանն առնչվող գործարքներ չեն իրականացվել, ապա ներդրումային ընկերությունը ներկայացնում է դատարկ հաշվետվությունը:

82. Թիվ 11 հաշվետվության սյունակները լրացվում հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) **«Ամսաթիվը»** մասում լրացվում է սփոթ գործարքի կնքման ամսաթիվը:
2) **«Գործարքի տեսակը»** սյունակում լրացվում է գործարքի կոդը, որը բաղկացած է երկու պարամետրերից և ունի հետևյալ տեսքը՝ «1թ/[1թ]» (թ - թվային).
   ա. Առաջին պարամետրը ցուցադրում է, թե ում միջև է կատարվել գործարքը, և այն կարող է ունենալ հետևյալ արժեքները. «1» - իր կամ իր հաճախորդի անունից և հաշվին ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հետ, արժութային շուկայի բրոքերների/դիլերների հետ կատարված գործառնություններ կամ «2» - հաճախորդների հետ իրականացված գործառնություններ: Սույն սյունակը կարգավորվող շուկայում կնքված գործարքների դեպքում չի լրացվում:
   բ. Երկրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի մասնակցի տեսակը. «1» - ռեզիդենտների համար (ինչպես նաև չլրացնելու դեպքում), «2» - ոչ ռեզիդենտների համար,
   մասնավորապես՝ «Գործարքի տեսակը» սյունակում «2/2» նշումը նշանակում է ոչ ռեզիդենտ հաճախորդների հետ իրականացրած գործարք:
3) **«Գործարքի իրականացման վայրը»** սյունակը լրացվում է հետևյալ կերպ. եթե գործարքը իրականացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում, ապա նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի

Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, եթե գործարքը իրականացվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկայում դեպքում՝ ապա նշվում է տվյալ օպերատորի լրիվ ֆիրմային անվանումը, եթե գործարքը իրականացվել է կարգավորվող շուկայից դուրս՝ ապա նշվում է «չկարգավորվող շուկա»:

4) **«Գործարքի արժույթներ»** սյունակը լրացվում է տարադրամների ISO կոդերի տեսքով, անգլերեն տառերով՝ օգտագործելով «/» նշանը որպես բաժանիչ առանց չակերտների, մասնավորապես՝ USD/AMD, ընդ որում համարիչում գրվում է սակարկվող (գործարքի առարկա) արժույթի նշանը, հայտարարում՝ գնանշող:
5) **«Առքի ծավալ (արտարժույթով)»** և **«Վաճառքի ծավալ (արտարժույթով)»** սյունակներում լրացվում են համապատասխանաբար գնվող և վաճառվող (սակարկվող) արժույթների ծավալները:
6) **«Առքի միջին կշռված փոխարժեք»** և **«Վաճառքի միջին կշռված փոխարժեք»** սյունակներում համապատասխանաբար լրացվում են տվյալ տիպի գործարքի միջին կշռված փոխարժեքները՝ յուրաքանչյուր արտարժույթի տեսակի գծով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՄՓառք= (Ած1*ԱՓ1+Ած2*ԱՓ2+...+Ածn*ԱՓn) / (Ած1+Ած2+...+Ածn),

ՄՓվաճառք= (Վծ1*ՎՓ1+Վծ2*ՎՓ2+...+Վծn*ՎՓn) / (Վծ1+Վծ2+...+Վծn) ,

որտեղ՝

ՄՓառք (ՄՓվաճառք) - առքի (վաճառքի) միջին փոխարժեք,
Ածi (Վծi) - «i »-րդ գործարքի առքի (վաճառքի) ծավալ,
ԱՓi (ՎՓi) - «i»-րդ գործարքի առքի (վաճառքի) փոխարժեք,
«i» - փոփոխական թիվ, որը փոխվում է 1-ից «n»:

ա. Սույն հաշվարկը կատարվում է արտարժույթի յուրաքանչյուր տեսակի համար, որով գործարք է կատարվել:
բ. Փոխարժեքները պետք է ներկայացվեն սակարկվող արժույթի ուղիղ գնանշման տեսքով, այսինքն՝ ցույց տան արտարժույթի փոխարժեքը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, բացառությամբ՝ անգլիական ֆունտ ստեռլինգի և եվրոյի փոխարժեքների:

7) **«Միջին փոխարժեք»** սյունակում լրցվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված առքի (վաճառքի) գործարքների միջին փոխարժեքը (փոխարժեքների միջին թվաբանականը)՝ յուրաքանչյուր արտարժույթի տեսակի գծով:

**(82-րդ կետը լրաց. 07.12.10թ. թիվ 324Ն, լրաց. 05.05.14թ. թիվ 114Ն)**

## ԳԼՈՒԽ 12. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 12 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

83. Թիվ 12 հաշվետվությունը բաղկացած է 2 էջից, որը ներառում է 3 աղյուսակ: Սույն կանոնակարգի համաձայն՝ ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վճարելիք գումարները Հայաստանի Հանրապետության դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել՝

պայմանավորված Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ: Ընդ որում, սույն կանոնակարգի իմաստով՝ արտարժութային ռիսկ են պարունակում նաև թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորները և մետաղական հաշիվները, ինչպես նաև թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորներով և մետաղական հաշիվներով արտահայտված ակտիվները և պարտավորությունները: Արտարժութային դիրքերի հաշվարկում ակտիվների և պարտավորությունների մեջ ընդգրկվում են նաև արտարժութային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները՝ հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով: Արտարժութային դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում Հայաստանի Հանրապետության հազար դրամով: Արտարժութային դիրքը ներդրումային ընկերության արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունն է: Արտարժութային դիրքերը սահմանվում են՝

1) երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,
2) կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,
3) փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի,
4) բաց, եթե տարբերությունը մեծ կամ փոքր է զրոյից:

**(83-րդ կետը լրաց. 30.0310թ. թիվ 55Ն, փոխ. 10.01.12թ. թիվ 4Ն)**

84. Արտարժույթների համար հաշվարկվում է համախառն արտարժութային դիրք, որն իրենից ներկայացնում է արտարժույթների դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

85. Առաջին էջում լրացվում են «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» տողերը՝ ըստ առանձին արտարժույթների (երբ առանձին արտարժույթի գծով ներդրումային ընկերությունն ունի կարճ դիրք, ապա «Արտարժութային դիրքի մեծությունն օրվա վերջին» տողում նշված մեծությունը տրվում է բացասական նշանով): Առաջին աղյուսակում արտարժութային դիրքերի հաշվարկը կատարվում է՝ ներառյալ համապատասխան արժույթների գծով ածանցյալ գործիքները, իսկ երկրորդում՝ առանց ածանցյալ գործիքների: «Արտարժույթի ISO կոդը» տողում լրացվում է տվյալ արտարժութային դիրքի մեծություն ունեցող արտարժույթի ISO կոդը:

86. Երկրորդ էջում ներկայացվում է ներդրումային ընկերության ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռային հոդվածների կազմն ըստ արտարժույթների: Երկրորդ էջը լրացվում է այն արտարժույթների համար, որոնց գծով համախառն ակտիվները կամ համախառն պարտավորությունները հաշվետվության կազմման պահի դրությամբ գերազանցում են 500,000 Հայաստանի Հանրապետության դրամի համարժեքը: Արտարժութային անավարտ ժամկետային գործարքները աղյուսակ 3-ում պետք է լրացվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա՝ Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված միջին փոխարժեքով: 3-րդ աղյուսակի 3-րդ տողում պետք է լրացնել հետհաշվեկշռային ածանցյալ գործիքները: «Արտարժութային հետհաշվեկշռային հոդվածներ» տողը լրացնելիս՝ յուրաքանչյուր արտարժույթի գծով կնքված հետհաշվեկշռային

արտարժութային գործարքները պետք է ներկայացվեն զուտ տեսքով: Օրինակ՝ եթե կնքվել է 50 ԱՄՆ դոլարի գնման և 100 ԱՄՆ դոլարի վաճառքի ֆորվարդ, ապա տվյալ տողում պետք արտացոլել (-50) ԱՄՆ դոլարը:

(86-րդ կետը փոխ. 05.05.09թ. թիվ 115Ն)

## «ԳԼՈՒԽ 13. ՏՈԿՈՍԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 13 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

## ԳԼՈՒԽ 14. ԲԱԺՆԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 14 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

## ԳԼՈՒԽ 15. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՅԻ ՌԻՍԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 15 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

## ԳԼՈՒԽ 16. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 16 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

(Գլուխ 13, 14, 15, 16-ը խմբ. 05.05.09թ. թիվ 115Ն,ուժը կորցրել են 30.03.10թ. թիվ 55Ն որոշմամբ )

## ԳԼՈՒԽ 17.

126.

(Գլուխ 17-ը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, 126-րդ կետը լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, ուժը կորցրել է 05.05.14թ. թիվ 114Ն)

## ԳԼՈՒԽ 18. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 18 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

127. Թիվ 18 հաշվետվությունում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից պահառության վերցված պետական արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ հաշվետու ժամանակաշրջանի (հաշվետու շաբաթվա հաշվետու ամսվա) վերջի դրությամբ: Ընդ որում՝ սույն հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով:

(127-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 30.03.10թ. թիվ 55Ն, լրաց. 06.11.12թ. թիվ 298Ն, լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)

128. Թիվ 18 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) **«Հաշվի տեսակը»** սյունակում լրացվում է «սեփականատիրոջ

արժեթղթերի հաշիվ» կամ «անվանատիրոջ հաշիվ»: Այն դեպքում, երբ միևնույն հաշվի սեփականատեր են համարվում մեկից ավելի սեփականատեր, նշվում է «սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ»:

2) **«Հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը»** սյունակում լրացվում է «իրավաբանական անձ» կամ «ֆիզիկական անձ»:
3) **«Հաշվետիրոջ ռեզիդենտությունը»** սյունակում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»՝ կախված նրանից, թե արժեթղթերի հաշվի սեփականատերը կամ անվանատերը ռեզիդենտ է, թե ոչ ռեզիդենտ:
4) **«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»** սյունակում նշվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, դրա բացակայության դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):
5) **«Թողարկողի անվանումը, գտնվելու վայրը»** սյունակում նշվում է թողարկողի անվանումը գտնվելու վայրը՝ թողարկման պետական գրանցման համարի (արժեթղթի տարբերակիչ ծածկագրի) բացակայության դեպքում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի համար պարտադիր լրացման ենթակա է անկախ այն հանգամանքից արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե ոչ:
6) **«Ծավալը»** սյունակում լրացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից պահառության վերցված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը, այդ թվում՝ գրավադրված և արգելադրված արժեթղթերի անվանական արժեքը: Պահառության վերցված արժեթղթերի անվանական արժեքի վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում սույն ենթասյունակը չի լրացվում:
7) **«Գրավադրված արժեթղթերի ծավալը»** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա գրավադրված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի ծածկագրի): Ընդ որում՝ տարբեր հիմքերով գրավադրված միևնույն արժեթղթերը համարվում են գրավադրված միայն մեկ անգամ:
8) **«Արգելադրված արժեթղթերի ծավալը»** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սեփականատիրոջ կամ անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներում առկա այն արժեթղթերի

ծավալը (ըստ յուրաքանչյուր արժեթղթի ծածկագրի), որոնցով գործառնությունների իրականացման վրա արգելք (սահմանափակում) է դրվել (բացառությամբ գրավադրման հիմքով արգելանքի): Ընդ որում՝ տարբեր հիմքերով արգելադրված միևնույն արժեթղթերը համարվում են արգելադրված միայն մեկ անգամ:

**(128-րդ կետը լրաց. 05.05.09թ. թիվ 115Ն, լրաց. 06.11.12թ. թիվ 298Ն , խմբ. 05.05.15թ. թիվ 114Ն)**

129. Այն դեպքում, երբ հաշվի տեսակը, հաշվետիրոջ իրավաբանական կարգավիճակը, հաշվետիրոջ ռեզիդենտությունը, արժեթղթի ծածկագիրը, թողարկողի ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը միաժամանակ համընկնում են, ապա Թիվ 18 հաշվետվությունը լրացնելիս տեղեկությունները լրացվում են ամփոփ՝ մեկ տողով:

**(129-րդ կետը լրաց. 05.05.15թ. թիվ 114Ն)**

## ԳԼՈՒԽ 19. ՏԱՐԵԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 19 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

**(Գլուխ 19-ը լրաց. 08.09.09թ. թիվ 272Ն, փոխ. 30.03.10թ. թիվ 55Ն , փոխ. 07.12.10թ. թիվ 324Ն, ուժը կորցրել է 06.11.12թ. թիվ 298Ն որոշմամբ)**